



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10069

297  
Lh-B1

1899

04 NOV 2009

297  
4-81

Ա.ՏՐՊԵՏ,

# ԽԱԼԻՖԻ Ա.Պ

ՊԱՏՄՈՒՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

,Միայն հզօրակոյն իմաստնագոյն Ալլահից  
օքնութիւն, օրպէսզի անհաւատների մարմինը  
անդամանութեք, նրանց յաղբանարկը, որ ա-  
ռանց ցանկութիւններին համեմու յետ դառ-  
նան:

Դ.Ռ.Բ. 111 Խմբան 122 պյետիւ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՒՄԳ-ԲԷԳ ԹԱՂՈՒՂԵԱՆԻ



Ն Ա Բ Ն Ա Խ Ի Զ Ե Խ Ա Ն

1899

1258а.1 ар 297  
6-81

Ա Տ Պ Պ Ե Տ

# ԿԱԼԻՖՅԱԾ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏՈԶՈՑՈՒԹԻՒՆ

100  
50  
25  
10  
1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱԿԱԴ-ԲԵԳ ԲԱԼՈՒՂԵԱՆԻ



ՆՈՐ ՆԱԽԻՃԵԼԱՆ

Տպարան Եղբ. Ա. և Յ. Աւագեանների.

Типография Бр. А. и С. Аваковыхъ.

1899

Արտասանուած „ՄՇԱԿԱ“ լւաղըից



ԶԱԿԻ 103-ՐԴ ՀԱՅԱԲՐՈՒՄ ԿԱՐԳԱԼՈՎ «Ը ՈՒ Լ Թ Ա-  
Ն Ր Ի Ս Լ Ա Մ Ի Խ Ա Լ Ի Փ Ր Հ Է» յօդածը,  
պարտք ենք համարում մի պատմական տեսութիւն անել և  
պարզել հայ ընթերցողների համար այդ հարցի իսկութիւնը:  
Խալիֆութեան յաջորդութիւնը մի այնպիսի հարց է,  
որի մասին խալամը մեծամեծ զոհեր է ունեցել հենց իր  
սկզբնական դարերում: Այս հարցի ձգձգւելու և տարածայ-  
նութիւնների պատճառն առաջացել է Մահմէդի վերջին  
օրերում բերանացի արած մի կատակց, որի աւանդուները  
չաղիսում<sup>1)</sup> ունազան կերպով են բացատրել օրէնսդրի  
միարք: Մահմէդին մահամերձ ժամում երբ հարցնում են,  
թէ ով է նրան յաջորդելու, պատասխանում է՝ «Ա մ ե ն ա-  
զ օ լ ե զ ը: Ահա այս բառի մէջ է կայսնում սկսնիների ու  
շիների վէճը. այս բառն է պատճառ եղել երկու աղան-  
դաւորների իրար մէջ ունեցած հակակութեան և բիւրա-

<sup>1)</sup> Հաղես—չորս գեղեց, գրւած Ե՞ն Մահմէդից յետոյ, նըա մեր-  
ձաւորների ձեռքով խօմարի, Օսմանի ժամանակ և կանոնաւորւել  
ին Մոռաւելի օրով, որպէս լացուցել մասն խալամի վարդապետու-  
թեան, զւրանի բացատրութեան, Մահմէդի և չորս գլխաւոր  
յաջորդների կայացրած վճիռների և կարգադրութիւնների:

ւոր անմեղների սրածութիւնների, կոտորածների և տանջանքների:

Մահմէդի ամենամօա խորհրդատուները և աշակերտները, որոնք հեթանոս և նորադարձ Մէքքէի ժողովրդի դարեւոր աւագանիներն ու առաջնորդներն էին եղել, գլխաւորաբար Աբուբէրը՝ օրէնսդրի աները, էօմէրը՝ Կօրէիշների ամենասիրելին և եռանդուն զօրավարը, աչք ունէին խալիֆի գաւազնի վրա, այն ինչ Սլին, որպէս օրէնսդրի հօրեղօրորդին, Մահմէդի միակ դստեր Փաթիմէի ամուսինը և առիւծի նման քաջ ու անյաղթելի հանդիսացածը, իր բոլոր կրօնական պատերազմներում, աւելի մեծ իրաւունքներ ունէր իրան յաջորդ հրատարակելու: Ալին շրջապատողները կտակը նրան էին վերագրում, որպէս ամենաքաջի և Մահմէդի օրինական տոհմական ժառանգութիւնը՝ Մէքքէի դարեւոր տիրապետողների յաջորդները՝ չէին կարող դիմանել և այդ ազգատի քաջարի որդուն հպատակւել: Մահմէդի մահից յետոյ, նրա մերձաւորները, կինը՝ Այիշէն, աջակիցները, զօրականները ժողովւելով՝ «ամենազօրեղը» համարեցին օրէնսդրի աներոջը՝ Աբուբէրին և նրան էլ հրատարակեցին խալիֆ (յաջորդ): «Ամենազօրեղ» բառը նրանք միայն անհատի մարմնական ուժի մէջ չէին տեսնում, այլ առաջնորդի դիմուրական կազմակերպութիւնը, քաղաքացիական կապերը, կառավարող ընդունակութիւններն էլ նկատի էին առնում:

Այդպիսով խսլամական սիւննի վարդապետութեան մէջ կազմւեց այն դաւանանքը, թէ—օրէնսդրի՝ Մահմէդի քացարձակ հրամանի համաձայն, խալիֆը նա է, ով ամենազօր եղն է իր զինւորական, քաղաքական իշխանութիւնով, որը տիրապետում է խսլամի նուիրական վայրերը—Մէքքէ, Մէդինէ, առաջնորդում է խսլամի հետևողներին Մահմէդի ծրագրած շաւլով նորանոր տիրապետութիւններ

անելու, խսլամի կրօնը տարածելու, նրա հետևողների թիւը բազմացնելու, աւանդը անսասան պահելու, ամեն ջանք գործ դնելու, որ նուիրական դրօշակը (սանջագը շէրիֆ) ծածանի աշխարհի ծայրերում:

Այս բացատրութիւնը ոչ թէ հետևողական, այլ մինչև անդամ երկնային պատգամ<sup>1)</sup> են համարում սիւննի մեծամեծ իւլէմները (կղեր): Քանի որ, Ալլահն է տալիս ամեն բախտ, նա է տնօրինում երկրի գործերը, ուրեմն Ալլահն ինքն էլ տալիս է միայն արժանաւորներին այն զօրութիւնը, որով կարողանում են տիրել, ձեռք բերել այդ նուիրական իշխանութիւնը:<sup>2)</sup> Խսլամի նախկին աշակերտներից ամենամեծ մասը հէնց սկզբից ընդունեցին և քարոզեցին այս դաւանանքը և ալէւիներին (Ալիի հետևողներին) շիլ [հերձւած] անունը տրվին, որոնց վարդապետութիւնը Պարսկաստանի սահմանից դուրս չեկաւ և որոնց թիւն այսօր եօթը ութ միլիոնից աւելի չէ կազմում, այն ինչ աշխարհի ամեն կողմը տարածւած են սիւնները (ուղղափառ) մօտ 150 միլիոն:

Համաձայն այս վարդապետութեան բոլոր սիւննի իւլէմները կոյրաբար հպատակւեցին իումեաններին, երբ Մուավին իւրացրեց խալիֆայութիւնը, Աբասեաններին, երբ վերջիններս Բաղդադի փառապածն գահից տիրում էին ամբողջ արևելքին ու խսլամ աշխարհին, սելջուկներին, երբ վերջիններս ընկճեցին Բաղդադի ամիրապետներին, Գահի-

<sup>1)</sup> Խսլամի վարդապետութիւնը բաժանւում է երկուսի. Երկնային կամ զուրանական, որի մասին անմիջական որոշում՝ կայ զուրանում, և հ ե տ ե ո զ ա կ ա ն, որը աւանդել են, Մահմէդի չորս գլխաւոր յաջորդները և որոնք արձանագրւել են „Հաղիսում“—ըստ գերբ:

<sup>2)</sup> Ղուրան II սիւրիս 118 և 248 այթ:

բէի ամիրանելին, և վերջապէս եգիպտասի ստրուկ մէմրուկներից առաջացած ամիրապէտներին, որոնք յափշտակեցին եգիպտական ամիրաների իշխանութիւնը: Այս բոլոր հարստութիւններին պատկանող միահեծան սուլթանները համարեւում էին խալիֆ, Մահմէդի տեղակալ և խալամի գլուխ կամ ներկայացուցիչ:

Օսմանեան սուլթանները, Կ. Պօլիսը աիրելուց յետոյ, մտածում, անխոնջ աշխատում, տքնում էին խալիֆութիւնը ձեռք բերելու համար, որով կապելով իրանց հետ խլամի հոգկորականներին, իսլամ ազգերին, կը կարողանային աւելի գիւրութիւնով տարածել, ընդարձակել իրանց իշխանութիւնը: Խրաբանչիւր տարի օսմանեան սուլթանները որքան նէրներ էին ուղարկում Մէքրէի, Մէդինէի ուխտատեղիններին, իրանց ջերմեռանդութիւնը և կրօնասիրութիւնը ցոյց տալու համար, որքան կաշառներ էին ցրում այդ քաղաքներում նստող Շէրիֆին, նրա արքանեակ իւլմէններին, շէրիբին, սէրիններին, գրանց որտերը գրաւելու համար: Բայց զ՞ւր. Գահիրէի ամիրապէտը՝ խալիֆ Ղաւրի սուլթանը, գիտենալով օսմանների նպատակը, շը թողեց մինչեւ անգամ, որ սուլթան Սէլիմ Ա. Եավուղը իր ծախսով վերաշնէ Մէքրէի ջըմուղները, որոնք այն ժամանակ կարօտ էին մեծածախս վերանորոգութիւնների: Այս դէաքը այնքան սուր կերպարանը ստացաւ, որ սուլթան Սէլիմ առիթից օգտակաց և պատրաստութիւն տեսաւ եղիպտոսի ամիրապէտի՝ խալիֆի դէմ պատերազմնելու: Ղաւրի ամիրապէտը կրօնական իշխանութիւնը ձեռքից չը փախցնելու համար, մինչեւ անդամ զիջաւ և սիւննի վարդապետութեան ամենասոխերիմ թշնամի Սէֆէւի Շահ-Խսմանի շիններից չի կամ կանական իշխանութիւնը ամենասոխերիմ թշնամի Սէֆէւի Շահ-Խսմանի շիններից էլ վախենալով, թէ մի զուցէ օսմանեանները իրանց սեփականիով խալիֆութիւնը, զօրեղանան և իրան ձեռ-

քից խլեն Սսորեստանի, Քարելաստանի, Մարաստանի և Հայաստանի սիւննիաբնակ նահանգները, զիջաւ և պատրաստութիւն տեսաւ օսմանեանների դէմ:

Խալիֆութիւնը ձեռք բերելու համար ի՞նչ արիւնահեղ պատերազմներ մղեց Սէլիմ սուլթանը. նախ պարսից դէմ՝ Զըլդի և Թաւղիզի ճակատամարտներում, մօտ հարիւր հազար մարդ կոտորեցին, ապա եգիպտացինների դէմ՝ Հալէքից մինչեւ Դահիրէ և խորքերը, աւելի բան հարիւր յիսուն հազար հոգի: Սէլիմը գեռ եգիպտոս չը հասած, Հալէքում ի մամ ը, նրան շողոքորթելու և մի բան պոկելու յուսով, ուրբաթ օրւայ աղօթքի մէջ (խուզք բէ), երբ Սէլիմին անւանեց խալամի խալիֆ և նէրկական քաղաքների առաջնորդ, վերջինը չը կարսդանալավ ուրախութիւնը զսպել, խսկոյն վրայից հանեց ոսկեհուռ վերաբկուն և հազցըց իմամին: Բայց վերջապէս Սէլիմը հասաւ նպատակին. Եգիպտոսի Ղաւրի սուլթանին Սուլիմյում, պատերազմի դաշտում սպանելուց յետոյ, մտաւ եգիպտոս, որտեղ հօր գահը բարձրացած Տունամբա սուլթանին կախել տրւաւ, Ճարդեց, կոտորեց նենգութիւնով մէմլուկների բոլոր աղնականներին, վշտեց նրանց զինուորական զօրութիւնը, տիրեց եգիպտոսին և արիւնահուրէ ձեռքբերով վեր առաւ Մէքրէի շէրիֆի ուղարկած նէրկական քաղաքների և Քէարէի արծաթեայ բանալինները, և այդ օրից (1516 թւին) մինչեւ այսօր կուամսիւննի հոգկորականները օսմանեան սուլթաններին են խալիֆ ճանաչում, նրան են յաջորդ համարում Մահմէդի, և երկրագնդի բոլոր մղկիթներում սիւննիները ուրբաթ օրերը խուզք բէ և պէ ն (աղօթք յատուկ խալիֆի համար) նրա անունով են կարդում:

Բացի շիիններից, սիւննի բոլոր աղզերը օսմանեան իշխանութեան տակ, թէ դուրսը, իրանց կրօնի պետ, Մահմէդի տեղակալ և խալիֆների յաջորդ ճանաչել են և ճա-

նաշում են օսմանեան սուլթաններին, համաձայն Մէքքէի չէրիքների և ամենանշանաւոր իւլէմների տըւած ֆէթւաներին (հատւած շէրիաթից կամ զուրանից): Խոլամ իւլէմների վճիռը արդարացի է, թէ ապօրինի, նրանց ֆէթւաները զուրանի ոգուն, «հ ա դ ի ս ի ն» համաձայն են, թէ հակառակ, այդ մի այնպիսի խնդիր է, որ մեր ներկայ յօդւածի ծաւալում չի կարող տեղ գտնել: Բաւական է, որ այսօր երկրագնդի բոլոր սիւննի իսլամները, Թիւրքիայի սահմանում, թէ գուրսը, ուրսաց, ֆրանսիական, անգլիական, չինական տիրապետութիւնների և թէ մասնաւոր իսլամ իշխանութիւնների տակ, անպայման ընդունել են և ճանաշում են օսմանեան սուլթաններին խալիֆ, Մահմէդի տեղապահ, իսլամի ներկայացուցիչ և նրանց համարում են իրանց հոգեոր պետը: Ազօթում են Ալլահին և խնդրում իրանց խալիֆի—օսմանեան սուլթանի կեաներին՝ երկարութիւն, սրին՝ կտրուկութիւն, զինւորական զօրութեանը՝ ոյժ ու կարողութիւն, կառավարութեանը աջողութիւն և բարգաւաճում: Խնչպէս վերե ասեցինք, օսմանեան սուլթանները բռնի ոյժով են ձեռք բերել այդ իշխանութիւնը, յափշտակել են եգիպտոսի վերջին մէմլուք ամիրներից, բայց նրանց այդ ընթացքը իսլամի իւլէմների վճիռներով արդարացի, իրաւացի. օրինական է նկատւել և ընդունել:

Այս բոլորից երեսում է, որ այն կարծիքը, թէ՝ սուլթանները ինքնակոչ խալիֆներ են, իրանք իրանց են հրատարակել և անուանում Մահմէդի յաջորդ, կամ սիւննի—մահմէդական ժողովրդի աշքում, եթէ կայ մէկը, որ կարող է համարւել իրեւ խալիֆ, մա ը գ ա ր է ի յաջորդ, այդ Մէդինէի մեծ-շէրիֆն է, —անհիմն կարծիք է:

Ոչ միայն ամեն մի իսլամ, այլ նոյն ինքն Մէքքէի չէրիքը, իսլամի բոլոր իւլէմներով, եթէ ամեն ուրբաթ օր,

կէսօրից մի ժամ առաջ, չեն աղօթում խալիֆի բարաթով [ֆէրմանով] շինւած մի ջամիում [ժողովարան—մզկիթ], նրա համար որոշւած աղօթքը (խուզքէ), նրան օգնութեան չեն կանչում բոլոր երկնային գօրութիւնները, ուամազանին վագնում ամիս] եթէ ներկայ չեն լինում այնպիսի ջամիններում [ժողով ամիս] եթէ ներկայ չեն լինում այնպիսի ջամիններին, այդպիսինները իսլամի հաւա-ընդհանրական աղօթքներին, այդպիսինները իսլամի հաւա-տացեալմերից անջատւած են համարւում և յաւիտենականութեան մէջ իսլամներին խոստացւած երջանկութիւնը վա-յելելուց զիկւած: Կարճ ասած, ինպէս մի կաթօլիկ ան-յելելուց զիկւած: Կարճ ասած, ինպէս մի կաթօլիկ ան-յայման պէտք է հաւատայ, որ Քրիստոսի վոկսանորդն է աշխարհի վրա չուօմի պապը, պապին չը ճանաշել՝ նշանա-կում է եկեղեցուց բաժանւել, նոյնպէս ամեն մի իսլամ հաւատում և դաւանում է սուլթանին, որպէս Մահմէդի տեղակալ երկրի երեսին:

Խոլամ սիւննի իւլէմների կողմից նոյնպէս յայտնի բո-դրո չէ նկատւած օսմանեան սուլթանների խալիֆութեան գէմ: Ամիրապետութիւնը սրանց ձեռքն անցնելուց յետոյ, 1516 թւականից մինչև վերջին դարը, մինչև ըէֆօրմացիայի սկզբները, ոչ թէ անբաւականութիւն, այլ ընդհակառակն, ամեն կողմ, ամեն տեղ մինչև երկնք են բարձրացրել օս-մանեան սուլթաններին, նրանց ջերմեռանդ կրօնամոլու-թեան համար: Ոչ միայն օսմանեանների հովանաւորութեան մանից դուրս ապրած իսլամ ակնյայտնի բոլոր իւլէմները մանից դուրս ապրած իսլամ ակնյայտնի բոլոր կղերը և ակնածութեամբ են զրել ու խօսել օս-մանեանների մասին: Այդպէս էլ լինելու էր, քանի որ իս-լամ կղերը միշտ գգւած ու փայփայւած է եղել սուլթան-ներից և կղերը եր շաւզով է առաջնորդել նրանց: Եթէ ուշադրութեամբ քննենք օսմանեանների պատմութիւնը, կը տեսնենք, որ շատ ու շատ է պարտական իսլամութիւնը օս-մանեան սուլթաններին: Վերջիններիս բարբարոսական սրա-

ծութիւները, պատերազմները, արիանեղութիւնները ու խոխողումները եթէ չը լինէին, գուցէ այսօր երկրագնտի վրա գտնվող 150 միլիօն սիւնիներից երեսունը հազիւ մնացած լինէր: Եթէ աշքի անցնենք միայն եւրոպայի գոգում վարած արիւնահեղ պատերազմների և բոնի խլամայնելու տարեգրութիւնները, կը տեսնենք, թէ յոյները, բոլգարները, բոչնակները, գերմանացիներն ու վենետիկները ինչ ահաւոր գոհեր են տըւել օսմանցիներին: Դեռ չենք ուզում յիշել ասիական գաւառների քրիստոնեաների պլիին անցեալ գարերում, աղջամղջում կատարւած գաղանային սարսափները, որոնց մեծագոյն մասը մատնմել են յաւիտենական մոռացութեան:

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել մի երկու օրինակ սուլթանների այդպիսի քսամնելի գործերից, որոնցից ընթերցողը գաղափար կարող է կազմել նրանց գործունեութեան մասին:

Սէլիմ Ա եավուզ (վէս), եգիպտոսին տիրելով՝ խալիֆայութիւնը ձեւաք բերելուց յետով, որպէսզի բոլորովին իր կողմը գրաւէ իսլամութիւնը և Ալլահին մի աւելի մեծ ծառայութիւն մտառուցած լինի, ֆէրման տուաւ՝ իր լշանութեան տակ ապրող բռոր քրիստոնեաներին բռնի խլամացնել, նրանց եկեղեցիները մզկիթի վերածել և հակառակողներին սրածել: Ո՞քան կաշառքներով, որքան տառապանքներով և սոսկալի չարչարանքներով քրիստոնեաները կարողացան համոզել Սէլիմին, տրւած հրամանը յետ առնելու համար: Կաշառւած մեծ-վիզիրը, եթէ անելանելի վիճակի մէջ չը ցցէր Սէլիմին, գժւար թէ քրիստոնեաները խուսափէին այդ ընդհանուր կոտորածից: Խորամանկ պաշտօնեան ասում է՝ «Եթէ քրիստոնեաներին կրտորենք, կարող փողը մրտեղից հաւաքենք, երկիրը կառափարելու համար: 2է որ իսլամ ժողովրդին հարկի չենք կարող ենթար-

կել»: Սուլթանը կիսով շափ յետ է առնում հրամանը, բայց և այսպէս ստիպում է խելք քրիստոնեաներից, բոլոր քարաշէն, կամարակապ եկեղեցիները, մզկիթի վերածել զրանք և առաջարկել քրիստոնեաներին, որ եթէ ցանկանում են, նորերը չինեն փայտածածկ:

Սուլթան Սուլեյման թէ 1583 թւկին, երբ կատարում էր որդու գահաժառանդ Մէհմէդի թլիփատման հանդէսը, այն բազմածախս հանդէմները, որոնց պատրաստութիւնները բիւրաւոր բանուրները տարիների ընթացքում հազիւ էին գլուխ բերել, որոնց արգ ու զարդը միլիոններ էր կուլ արւել, արծաթն ու սոկին, մարգարիտն ու գոհարը չէրիներով<sup>1)</sup> էր գործադրել, ամիսներով ամբողջ Սթամբուլը սղողել էր քաղցրակիներով, օշաբակիներով և վարդիւրերով, ել ճրագալոյծներ, հրախաղութիւններ, սուսերամարտիկ թշւառ բոշնակներ, որոնք իրանք իրանց յօշտում էին, նուազածու խըմբերի, պարսկների թափորները թնդացնում էին Յօսվասրի ափերը. ճաշկերոյթներին, ընթրիքներին հարիւր հաղաք մարդիկ էին մասնակցում, հրախիւրած հանդիսականները և օսմար պետութիւններից եկած ներկայացուցիչները իրանց թանգագին նէրներով սփուել էին սուլթանի մայրաքաղաքոււ: Ի ալիքը խլամ աշխարհին մի նոր սիւրապիկ անելու համար և միւսիւրմաններին մի աւելի հոգեկան միախթարութիւն պատճառելու տենչով, ե օ թը հ ա զ ա ր հ ի ն գ հ ա ր ի ւ ր ըրիստոնեայ մանուկներ խլել էլ տառելիրանց թշւառ ծնողներից և կահաժառանդի հետ թլիփատել:

Հատօրներ կը կաղմէի, եթէ մենք օսմանեան սուլթանների ըրիստոնեայ հպատակներին խլամացնելու և մահմէդականութիւնը տարածելու, բազմացնելու դիտմամբ

<sup>1)</sup> Զէրէ—100 հօլոս, մօտ 9 տուր:

կատարած բարբարոսութիւններն ու անդժութիւնները մէկ մէկ նկարագրէինք: Վերջացնում ենք մեր խօսքը մի երրորդ օրինակով: Դեռ անցեալ դարու վերջերում, 1789 թւին, Սէլիմ Դ սուլթանը, իր գահակալութեան երրորդ օրը, ծպտեալ դուրս եկաւ մայրաքաղաքը լրտեսելու: Խոհամականութեան ջերմ պաշտպան և կրօնամոլ իսլամ լինելը գործով ապացուցանելու համար, այդ օրը նա գազանքար երեք անմեղ քրիստոնեայ սպանել տըւաւ, որոնցից առաջինը մի քսան տարեկան հայ պատանի էր: Սրա յանցանքը մաքուր և կոկ հագնւած լինելն էր, որը դուր չեկաւ իսլամի պետին: Թշուառ պատանին քրիստոնեաներին արտօնւած միայն սև գոյնով վայելուշ շորեր ունէր հագին, այնպէս որ Սէլիմ սուլթանը, երկար քննելուց յետոյ, ճարահատեալ հրամայեց պատանու սև լափշինները [կօշիկ] հանել ոտքերից: Պատանու կարմիր գուլպաները և գեղին մասերը շարժեց Սէլիմի ժամփարը, որը ինքնարաւական ասաց.

— Զես իմանում, որ գեաւուրներդ այդ գոյները բանեցնելու արտօնութիւն չունիք: Տարէք Պալբիխանէ (ուր գանում էր կառափնարանը):

Բացի իսլամի տարածման համար կատարած այսպիսի մեծամեծ բարբարոսութիւններից, սուլթանները երկրի դեկը յանձնած էին իսլամի իւլէմներին: Առանց նրանց խորհրդի, առանց նրանց վճուի ու համաձայնութեան սուլթանները ոչ մի գործ չեն արել և ոչ էլ ֆէրման ստորագրել: Թէ պալատում, թէ զինուրականների դասում ամենանշանաւոր տեղը իւլէմներին է եղել և ամեն անգամ աւարի ամենաշաղ բաժինը, եկամուտի ամենաալահով մասը նրանց է հասել:

Ոչ միայն իւլէմները ամեն մի քաղաքում, ամեն մի աւանում նշանաւոր տեղ են բռնել և տիրացնել՝ ինչպէս վագֆին (կղերին, մղկիթներին յատկացրած կալւածներ),

նոյնպէս հոգևորականութեան յատկացրած գաւառներին, կղզիներին, անտառներին և դաշտերի եկամուտներին, այլ պետութեան գանձարանից ամեն տարի նշանաւոր գումար բաժանեւել է նրանց՝ որպէս վարձատրութիւն: Մէքրէի շերեքը, բացի տարեկան այստեղ գնացող 80,000-ից աւել հաջիններից ստացած նւէրներից և քաղաքի նշանաւոր եկամուտներից, մի հագին գումար էլ օսմաննեան գանձարանից է ստանում: Գանձարանից մեծամեծ թոշակ ստացող Մէքրէի, Մէղինէի մէջ ապրող իւլէմների և լրջակայքում բնակւող չէյխերի թիւը երեք-չորս հարիւրի է հասնում: Սուլթանի զինուրականները, քաղաքական պաշտօնեանները տարեկան մի ամսական հազիւ են ստանում, այն ինչ Մալիէի (Փինանս) տեսուչը պարտաւոր է ամեն տարի որոշ ժամանակին, նոր կտրւած ոսկի գրամով, առանձին-առանձին ծրաբներով միանաւդ ուղարկել այդ բոլոր իւլէմներին ու չէյխերին, նրանց դարմոր թոշակի շարունակութիւնը: Ապա ամեն տարի հաջինների տարած և նրանց հետ ուղարկած նւէրները:

Մի առանձին պաշտօնակատար, ուղեկից սպասաւորների մեծ քաղմութեամբ, հանդէսով, պատշաճաւոր դրօշակով Քէարբէի (այն տաճարը, որտեղ գտնւում է սև քարը, և նստում է Մէքրէի Շէլիֆը) ահաւոր շինութիւնը ծածկելու համար տանում է Մէքրէ սուլթանի ուղարկած այդ վրանը, որ կարւում է կարմիր մահուղից, ոսկէթելով ասեղնագործած: Մինչև անդամ եթէ հաջինների թիւը որ և իցէ պատճառով 80,000-ի չի հասնում, սուլթանը պարտաւոր է աղքատներին, կարուեալներին գանձարանից փող բաժանել, ուխտաւորների պակասորդ թիւը լրացնել, ուղարկել դէպի նւիրական քաղաքները: Խոկ ամբողջ Արաբիան այս բոլորի վիճակին Օսմաննեան գանձին ու երկրին ոչինչ չի վերադանում, բացի Ճրիակեր և խստապահանջ հաջիններից:

Եւ ինչի՞ համար է այս բոլորը, գիտէք ընթերցողներ, — որպէսզի իսլամը սուլթանին խալիֆ ճանաչի:


Այս բոլորից յետոյ, շատ պարզ է, որ իսլամ հոգևորականները օսմանեան սուլթաններից պիտի անշափ գոհ լինէին, ամեն տեղ և ամեն կողմ գրւատէին, փառաբանէին նրանց անունն ու յիշատակը, որպէս Մահմէդի ամենապժանաւոր տեղականներ և խալիֆների օրինական յաջորդներ:

Եւ եթէ եղել են գծգոհներ, բողոքողներ օսմանեան սուլթանների դէմ, դրանց ձայնն էլ խեղդւել է ահաւոր իսլամ իւլէմների բազմութեան ճնշման տակ: Բայց թէ ինչի՞ սուլթանը այժմ այլ և ս խալի փշէ, այդ բացատրելու համար բաւական է, որ աւելի որոշ կերպով պարզէնք, թէ ինչ կապ կայ խալիֆի և իսլամ ժողովրդի մէջ, ինչ պարտականութիւն ունի խալիֆը դէպի խլամ ժողովրդը, ժողովուրդն ու իւլէմները դէպի խալիֆը:

I. Ամենից առաջ պէտք է գիտենալ, որ իսլամի կրօնը (մեր խօսքը գլխաւորապէս սիմնիների մտսին է) քրիստոնէութեան նման, չէ սահմանափակւած միմիայն զուտ կրօնական վարդապետութեան շրջանակով: Զուրանը լոկ մի սաստածարանական վարդապետութիւն չէ. նա անրաժանի կրօնա-քաղաքական, երկրա-երկնային իսլամի պետական կազմութեան անփոփոխելի օրէնսդրութիւնն է: Իսլամի կրօնապետը՝ խալիֆը, թէ աշխարհական և թէ կրօնական գլխաւորն է այդ պետական կազմութեան, միայն զուրանի արտօնած, սահմանած իրաւունքներով: Սուլթանը, զուրանի համաձայն, ճանաշչելով իսլամի խալիֆ, իր ընթացքը պիտի լինի համաձայն զուրանի վարդապետութեան. հակառակ դէպօւմ, եթէ նա զուրանի ներհակ ընթացք ըռնէ, իսլամը նրան չի ճանաշիլ որպէս խալիֆ, նա կը դառնայ սոսկ մի աշխարհական բռնակալ իշխան, մինչեւ ան-

գամ քափիր (հայհոյող), որպիսի մի իշխանաւորի հովանաւորութեան տակ ապրելու իրաւունք չունի իսլամ անհատը և պիտի հեռանայ, աղատի, եթէ հնարաւորութիւն գտնի: Հուրանի վարդապետութեան համաձայն, միջոց գտնող և չը հեռացող իսլամը զրկում է երկնային փառքից, չէնչնէթի վայելքներից:

Այստեղ մի հարց է առաջ գալիս—թէ ինչի՞ ուրեմն Մարօքի, Օմանի սուլթանների, Յուսարայի, Աֆղանստանի Բէլուջիստանի էմիրների հպատակ իսլամ սիմնիները չեն դիմում դէպի խալիֆաթի կալւածները: Ինչի՞ քրիստոնեայ պետութիւնների հպատակ միւսլիմները չեն զաղթում դէպի թիւրքիա: Եսլամ իշխաւորների երկիրներում Մարօքում, Օմանում թիւրքմէնստանում և Աֆղանստանում իշխողները սիմնի խւամներ են, և այդ երկիրներում գործադրում է բացարձակապէս չէրիխաթը կէտ առ կէտ. չնայելով, որ բուն խալիֆայական երկրի մէջ այսօր չէրիխաթի հետ զուգընթաց թագաւորում էնոր օրէնսդրութիւնը, այդ երկիրներում կարիք չէ ել զգացիել որկիցէ վերանորոգութեան, այն պատճառով, որ այդ երկիրներում զուտ իշխամներ են ապրում, որոնք բացի չէրիխաթից, ուրիշ օրէնք ունենալու իրաւունք չունին, մինչեւ անգամ չէրիխաթը քննադատեն աններելի յանցենք է: Քանի որ պատ զործադրում է չէրիխաթը, ժողովուրդն էլ, կղերի հետ միացած է կրօնական տեսակէտով խալիֆի հետ և ամեն մզկիթ նրանից ստացել է և ստանում է օրինական թէրաթները (հրովարտակ), նրանք իրանց անբաժան են համարում համիալամական պետութիւնից և ստիպւած չեն իրանց հայրենիքից հեռանալու: Նամանաւանդ որ այդ սուլթաններն ու ամիրները համարում են խալիֆի օգնականներ, իրանց հայրենիքում և սուլթանը, դրանց գահակալութիւնները չնորաւորելիս, անւանում է նրանց իր կլօնական ներկայացուցիչները իրանց վիճակներում: Դեռ կարգադրում էլ է



խալիքը, որ դրանց ժողովուրդը մարդարէի տեղակալին յատուկ ուրբաթօրեայ վխսւրէիրա աղօթքից յետոյ, յիշեն իրանց աղօթքներում տեղական իշխանաւորներին ևս: Այսպէս այդ իշխանաւորները դառնում են մի տեսակ փոխանորդներ մեծ իմամի և դրանց երկիրներն էլ՝ համիսլամական վիճակներ:

Խոկ այլադաւան տիրապետողների սահմաններից պարտաւոր են հեռանալ միայն միջոց ունեցողները, և եթէ հետաքրքրւնք, կը տեսնենք, որ հեռանում էլ են: Խրիմից, Կաղանից, Կովկասից և ուրիշ տեղերից ամեն տարի նիւթապէս ապահովւած դասը քիչ-քիչ գաղթում է, թէն խւամին յատուկ կրիայի քայլերով: Խոկ Ալժիրի, Տունիսի, Հնդկաստանի իսլամների մէջ տարածւած է մի այսպիսի, ինչպէս իրանք ասում են, չիլէր-չէրի (օրինական նենդ) կեղծ փաստ:—Քանի որ այդ պետութիւնները դաշնակից են խալիքի հետ, այդ գաշնազրերի համաձայն իսլամ ժողովուրդներն էլ, ազատ անկախ՝ իրանց կրօնական յարաբերութիւնները պահապատում են խալիքի հետ, հետեաբար էլ բռնութեան տակ չեն և վայելում են խալիքի չնորհ՝ դաշնազրերի զօրութեամբ՝ տիրող պետութիւններից, ուրեմն կարիք չունին գաղթելու, իբր թէ ապրում են խալիքի իշխանութեան տակ: Բայց և այնպէս միջոց ունեցող մոլեուանդներն այստեղերից էլ են դաղթում:

Սրանից էլ հետեւում է, թէ համաձայն զուրանի որոշ և բացարձակ պարտաւորեցուցիչ հրամանի, սուլթանը կրօնական պատերազմ հրատարակելիս, սանջազը-չէրիքը (նուրբական զրօշակը) գուրս հանելիս, երկրագնդի ամեն ազգի սիւննի իսլամները պարտաւոր են ոտքի կանգնել և դիմել դէպի այդ նուրբական դրօշակը ու չէիդ դառնալ (մարտիրոսանալ) այդ պատերազմներում: Այս փաստից է, թուրքօֆիլները վախենում են՝ թէ սուլթանը, որպէս

խալիք, եթէ կրօնական պատերազմ հրատարակէ, ամեն իսլամ պարտաւոր է նրան հետեւել և կամ մեծ-իմամի միքանի տող գրուածքը, չուօմի պապերի կոնդակների նման, կարող է նորբորել և ոտքի հանել իսլամներին իրանց տիրապետող պետութիւնների դէմ: Բայց փորձը մի քանի անգամ վերջին դարերում չէ արդարացըրել օսմանեան խալիքների այդ երազը. ոչ սանջազը-չէրիքի տակ է կարողացել հաւաքել իսլամ հաւատացեալներին և ոչ էլ ոտքի են հանել այդ «մեռած լէշին» նրա երկար ու ձիգ հրովարակներն ու քարոզիչները՝ նրանց տիրող պետութիւնների դէմ: Սրա պատճառները՝ թողնելով ուրիշ անդամի, անցնենք խալիքի իբաւունքների և պատականութիւնների շարունակութեան:

II. Խալիքի ամենագլխաւոր պարտականութիւնն է՝ անխախտ պահել զուրանի վարդապետութիւնը, ինչպէս իր անմիջական իշխանութեան տակ գտնւած երկիրներում, նոյնպէս նրա սահմաններից գուրս. հսկել և գործադրել տալ կէտ առ կէտ իսլամի չէրիքաթը, որից զուրս խալամը պարտաւոր չի լինել նրան հալատակելու: Քանի որ այսօր սուլթանը, երկրի քրիստոնեայ ազգարնակութեան պահանջման և եւրոպական քրիստոնեայ պետութիւնների հետ կապած դաշնազրերի համաձայն՝ ստիպւած նոր-նոր օրէնսդրութիւն է սահմանել, այնպէս որ այդ նորոգ սահմանւած կանոնների համեմատ էլ կառավարելու են իսլամները, ուրեմն սուլթանը իր խալիքական իշխանութեան դէմ է վարել, հետեապէս խալամը նրա վրա այլ ևս Մահմէդի տեղակալի հայեացը չի կարող ունենալ:

Եթէ քննենք վերջին դարի օսմանեան պատմութիւնը, Սէլիմ Գ.-ից մինչև մեր օրերը, մենք կը նկատենք, թէ ինչ բանի ուժերով են քրիստոնեայ պետութիւնները ստիպել օսմանեան սուլթաններին վերանորոգութիւններ մտցնել

երկրում, մասնաւորապէս վարչական և գատաստանական բաժիններում և ոքքան խօչնդուտների են հանդիպել սուլթանները ամեն մի վերանորոգչական քայլափոխի ժամանակ: Ոքքան մեծ կորուստների է ենթարկւել պետութիւնը, ինչ զբկանքների է ենթարկւել ժողովուրդը, ազգաբնակութիւնը, վերանորոգութիւններ չը մտցնելու պատճառով: Սուլթանի կառավարութիւնը գտնւել է երկու սրերի մէջ: Մի կողմից քրիստոնէական՝ իսլամի հետ հաւասարութիւն պահանջող վերանորոգութիւն և արտօնութիւն, միւս կողմից խալիֆական պարտականութիւն՝ իսլամի առանձնողինեալ երկնային կարգերի անխախտ պահպանումն:

Սուլթանի վարչութիւնը ուրիշ ելք շունենալով՝ պարտաւորւել է կեղծել և խարել, խոստանալ և չը կատարել, խաթթը-չէրիքներով կուրացնել արարքին աշխարհը, ներքին գաղտնի հրահանգներով, իւլէմների ձեռքով շարունակել իր ընթացքը դարեսը ուղղութիւնով: Այստեղ պէտք է աւելացնել, որ սուլթանների քրիստոնէաններին խոստացած արտօնութիւնների բոլոր հրովարտակները և հրատարակւած օրէնսդրութիւնները, խմբագրւելուց յետոյ, նախապէս առաջարկւել են իսլամ՝ իւլէմների քննութեան ու փոփոխութեան և չէրիքթի համաձայն ու օրինական ճանաշւելուց, չէլս-իւլ-իսլամից վաւերացւելուց յետոյ են հրատարակւել:

Բայց և այնպէս, սրանցից ինչ օգուտ, քանի որ հրատարակւած բոլոր հրովարտակները և օրէնսդրութիւնները չէրիքթին հակառակ են եղել: Բաւական է, որ դրանցով խոստացւել է ճանաշել «ք ա յ ա ն ե ր ի ն» իսլամի ժառանգների հետ հաւասար խալիֆի թագաւորութեան մէջ: բաւական է, որ ասւել է թէ օրէնքը նրանց հաւասար պիտի նկատէ, —արդէն չէրիքթը խախտւել է, իսլամի օրէնքը ոտքի տակ է տրուել: Հապա այն դատաստանական, վար-

չական և ուրիշ հիմնարկութիւնները, որոնք բոլորն էլ իսլամի չէրիքթին հակառակ են: Խոլամ երկրում, բացի զուրանի աշակերտ զաղիներից, ուրիշ մահկանացու ինչպէս կարող է դատաւոր լինել, և ամեն վճիռ հիմնւած պիտի լինի չէրիքթի վրա. ուրեմն այդ նորահաստատ դատարանները, որոնց մէջ գանւում են «ք ա յ ա ն ե ր» ևս, փակել են խալամի երկնային չէրիքթի դռները միւսիւլմանի առաջ, վերցրել են խալիֆի պետութեան միջից Ալլահապէր օրէնքը:

Հետևաբար իսլամ ժողովուրդը, նրա հետ իւլէմների երկրորդական դասը, իսկապէս իսլամի չէրիքթը խախտւած են համարում, հակառակ պալատը շրջապատող և երկրի գլխաւոր վարչութիւնը ձեռքն ունեցող առաջնակարդ իւլէմների ջանքերի: Պալատական կղերը իրանց չ ա ղ բաժիններից և բարձրակարգ աթոռներից չը բաժանւելու համար՝ կեղծում ու համակերպւում են սուլթանի պալատականների և մինխստըների հետ և իրր թէ իսլամի բարիքը նկատի ունենալով՝ արդարացնում ու օրինականացնում են դրանց ընթացքը: Տրանջում է ժողովուրդը խալիֆի դէմ, զգում է, որ «խ ո ւ գ ր է ն» նրա անունով կարգալով՝ մեղմնչում է կրօնի դէմ: բայց տատանւում է, —իւլէմները, առաջնորդները նրան կաշկանդում են, նրան մոլորեցնում են և նա ինքն էլ այդ անել դրութիւնից ազատւելու մի նպաստաւոը հնարը չի գտնում:

Իւլէմների, իրանց ֆէթւանները արդարացնելու համար, գլխաւոր փաստը նրանումն է և նրանք ասում են զաղտագողի, որ այդ բոլորը գրւում և անւում են խոլամի բարիքի համար, մի կերպ երովացիներին մոլորեցնելու, մինչե բարեյաջող ժամանակի հասնելը: Բայց ժողովուրդը, կարդացողները, սօֆթանները իրանց ձեռքում աւելի զօրեղ փաստ ունին, այն է, թէ — «իսլամի օրէնքը, դաւանանքը բացայստ պիտի լինի, դադապողի և թաքցնովի կրօնքով նրանք

շեն կարող երկնքի ճանապարհով գնալ և խոստացւած երանութեան հասնելոց: Սրանից պարզ է, որ այդպիսի առաջնորդները չեն կարող այլ ևս ճանաշւել իսլամի աւանդապահ իւլէմներ և սուլթանը՝ Մարգարէի արժանաւոր յաջորդ:

III. Խալիֆը պիտի օր ու գիշեր աքնի իսլամի տարածման խնդրով, պիտի ջանայ նորանոր երկիրներ նւաճել անօրէններից ու այլագաւաններից և չը պիտի թոյլ տայ, որ իր գնդերը, որոնց հարկ եղած գէպօւմ երկնային մէլախներն են (հրեշտակներ) օգնութեան հասնելու, պատերազմի դաշտից գլխակոր ետ դառնան, կամ փախչեն այդ ճակատամարտերից:

Բայց չարաբաստիկ բախտի ողին երեսը վաղուց շուռ է տըւել օսմանեան սարսափահար սուլթանների յաջորդներից: Հարիւր տարուց աւելի է, ամեն կողմ իսլամական զինուորները ջարդում, կոտորում, ցրում ու փախչում են ճակատամարտներից և երկնային գօրութիւնները չեն գալիս նրանց օգնութեան, որից կարելի է գուշակել, որ Մահմէդն էլ երես է շուռ տըւել օսմանեան գահակալներից և չի ընդունում նրանց իրեն արժանաւոր յաջորդ: Մինչև անդամ Այիշէի ննջարանի վարագոյրը՝ Մանջագը-Շէրիֆը չի նպաստում, չի զօրացնում պոռտափասօս զէրէպներին և հաստաբազուկ գահիմաններին, որոնք ուսւ գրագունների ու կօգակների առաջից գլխակոր փախչում, վերագառնում են իրանց լրճիթները: Հարիւր տարուց աւելի է, որ ոչ միայն մի թիկ հող չի աւելացել խալիֆի հողերի վրա, այլ կարտելով, մանրելով, այսօր օսմանեան փառապանծ շրջանում ունեցածի քառորդն էլ հազիւ է մնացել, թէև այդ բոլորը չի խանգարում գոռող հիւնքեարների վերջին յաջորդին, առանց կարմրելու շաղի (յաղթող) մականունը ևս կրելու իր տիտուլների մէջ:

IV. Սուլթանը Մահմէդի տեղակալ և յաջորդ հրատարակելով, անպայման պարտաւոր է կէտ առ կէտ ընդունել և դաւանել այն օրինագիրքը, այն չէրիաթը, որ աւանդած է օրէնսդրից և միայն այդ չէրիաթն անպայման ընդունելով կարող է համարել խալիֆերի յաջորդ: Հուրանը իր վարդապետութեան բոլոր հետեւողներից պահանջում է անտարակոյս հաւատ և դաւանանք գէպի իր բովանդակութիւնը, որի մի ամենաաննշան կէտի մասին թիւր կարծիք յայտնելը գատապարտելի է համարում: Այդ վարդապետութեան համաձայն, խալիֆի տիրապետութեան տակ գտնած բոլոր երկիրները պատկանում են «քէլթիւլմալին» [իսլամ համայնքին] և ոչ թէ սուլթանին, այնպէս որ օսմաննեան սուլթանների խալիֆ հրատարակելուց առաջ ձեռք բերած բոլոր կալւածներն էլ առանց պայմանի, խալիֆայութիւնն ստանձնելուց յետոյ, իսլամ հաստարակութեան սեփականութիւն գարձան: Խալիֆը իսլամի առաջնորդն է, նրա զինուորական գօրութեան գլխաւոր հրամանատարն է, նրա նւիրական բաղադրների (Մէքրէ-Մէդինէ) պաշտօնեան է, մի խօսքով նրա կարողութեան աւանդապահն է, բայց երբէք աէրը չէ. ծախելու փոխելու նւիրելու իրաւունք չունի: Կարող է իր արժանաւոր հպատակներին երկրի այս ու այն կատրի երեսից օգտակալու արտօնութիւնը տալ, նսիրել, բայց մի օտար պետութեան բաշխել երբէք չի կարող: Մինչև անգամ, չէրիաթի համաձայն, խալիֆը իրաւունք չունի պետութեան եկամուտներին զիալշելու, իւրացնելու, բացի իլան համար որոշած թոշակից: Երկրի եկամուտը գործադրելու է հաստակութեան բարիքի, իսլամի տարածման և բարգաւաճման համար:

Էօմէր խալիֆի որդին, — աւանդաբար պատմում է կենսագրութիւնների մէջ, — մի օր մօտեցաւ հօրը

և խնդրեց որ իրան մի դրհէմ (կէս մսխալ) արծաթ տայ, որպէս զի մի վերաբկու գնի:— Որդեակ, պատասխանում է հայրը, սպասիր մինչև վաղը, այս օրւայ հինգ դրհէմ թռչակս ալրէն ծախսւած է, իսկ հասարակութեան պատկանող գանձին, խօ գիտես, չեմ կարող դիպչել:

Այն ինչ ներկայ խալիֆների յաջորդը, առանց տատանւելու, արինի փոխարէն՝ առանց մի կաթիլ քրտինք անգամ զոհելու, ոչ թէ «քէյթիւմալի» եկամուտից, այլ պետութիւնից Կիպրոսի նման մի ահագին կղզի բաժանեց տրւալ անգլիացիներին, Բօսնիա-Հէրցէգովինիայի նման նահանգները՝ Աւստրիային, Թէսալիայի և Եպիրոսի կէսը՝ Յունաստանին: Յայտնի բան է, մազն ու մանանեխը քննող մանրազնին իւլէմները նկատում են, զգում են, ցաւում են, բայց զօրաւորներն անկարող են խօսելու, իւղալի պաշտօնների թեկնածուները պարտաւորւած են լուելու, իսկ սօֆթաների, մօլանների ձայնը խեղբւած է, էլ ինչպէս իսլամը այդ պարտազանց աւանդապահին խալիֆ ճանաշի ու դաւանի:

V. Խալիֆը իշխանութեան տակ պիտի ունենայ նուրիսկան քաղաքները [Մէքքէ-Մէդինէ] ու նրանց ճանապարհները ազատ և ապահով պիտի պահպանէ հաջ գնացալների առաջ: Եւ վերջապէս, օրինականութեան դասն անցած իւլամական սրբազն, նուիրական իրերը պարտաւոր է իր արամադրութեան տակն ունենալ:

Այս բոլորը ճշդութեամբ կատարում է խալիֆը, այնպէս որ սրանց մասին դժգոհ լինելու առիթ չունին իւլամները: Թէ ինչ զոհողութիւններ է անում սուլթանը Մէքքէ ու Մէդինէ գնացող հաջիների պատճառով, նոյն երկում ապրող իւլէմներին, շէյխերին ինչպէս է վարձատրում, վերև նկարագրեցինք: Իսկ սրբազն աւանդական նիւթերը ամենայն ակնածութիւնով ու խնամքով սուլթանը պահում է իր պալատում, կրկնակի, քառակի փականքների տակ, ամենախիստ դգուշութիւնով:

1) Այծի բրդից գործւած Սանջագը-Ջէրիֆը, որը առաջին անգամ Մահմէդը քաշեց Այխչէյի ննջարանից տարաւ, բարձրացրեց ուղակ դրօշակ՝ ամբոխին Մէքքէ ուխտի առաջնորդելու համար, Աբուլեքրի հրամանով, մեծ խնամքով պահւելով՝ յանձնել է յաջորդաբար Համի, Բաղդադի, Գահիրէյի խալիֆներին, որոնցից յափշտակեց Մէլիմ Ա., որպէս խալիֆների յաջորդ: Խալամները հաւատում են, որ եթէ այդ դրօշակը պարզէ պատերազմում՝ անպատճառ իրանք յաղթող կը հանդիսանան:

2) Սրա հետ պահում է Էօմէրի դրօշակը, որի հրաշագործութիւնը նախորդից քիչ նւազ է համարում:

3) Խրբախ Ջէրիֆը [նուիրական թիկուցը], որը Էօմէրը գնեց Ջէրիրի որդուց, որին նուիրել էր Մահմէդը: Այս հրաշագործ համարւած վերաբկուն քաւասուն կապոցների մէջ փաթաթւած, մեծ զգուշութիւնով պահում է մինչև օրս, որին համրոյը են տալի ամեն տարի մի անգամ խալիֆը ու նրա մեծասեծները: Ասում են, որ ասրից է գործւած և զարմանալի է, որ հաղար երեք հարիւր տարւայ ընթացքում չի փթել:

4) Քէարէյի արծաթեայ բանալին, որը Մէքքէի Ջէրիֆը նուիրեց Մէլիմ Ա-ին, Մէքքէի, Մէդինէի բանալիների հետ:

5) Մահմէդի մօրուսի մազերը:

6) Մահմէդի նալբնները [փայտի քոշեր]:

7) Էօմէրի ինքնաձեռագիր մի մատեան և ուրիշ մանր մունք իրեր, որոնց ամեն մէկի հետ կապւած է իսլամի քարոզիչների, նախկին դաւանողների, խալիֆների, որպականների և իւլէմների կեանքից այլ և այլ դէպքեր, առապելներ, վէպեր:

VI. Թէկ սուլթանը խալամի առաքեալի [Բէսուլ—այս է Մահմէդի պաշտօնական անունը, և այդ տիտղոսով նրան անուանում է իսլամ աշխարհը] և նրա յաջորդների տեղա-

կալն է, կրօնի գլուխն է, բայց նա իրաւունք չունի կրօնական վճիռներ տալ, ինչպէս տալիս են ուրիշ դաւանանքների կրօնապետները: Խալիֆը գուրանի ու շէրիաթի շաւղից գուրս գալու արտօնութիւն չունի. սխալանքների տեղիք չը տալու համար, հէնց նախկին ամիբապետների ժամանակից, կարդ է դրւած, ամեն մի գործ նախապէս յանձնել ամենայայտնի մի քանի իւլէմների վճռին, ջոկ ջոկ, և ապա գործադրել: Խալիֆներն իրանք իւլէմներից, որին որ կամեցել են, նրան են յանձնել գործերի վճիռը: Շէյխ-իւլիսամի. [Երկրի առաջին կրօնապետը]. լմտրութիւնն ու հրաժարեցումը բացարձակապէս կախում ունի սուլթանից: Շէյխ-իւլիսամն էլ նշանակում է, դարձեալ խալիֆի բարաթով, նշանաւոր իւլէմներին, պետութեան գաւառների բոլոր միւֆթիներին (վիճակաւոր վերահսկող կրօնի), ղաղիներին (վիճակաւոր դատաւոր), միւգէրիներին (նոյն մըզկիթների քարողիչ-ուսուցիչ) և ուրիշ սպասաւորներին: Այս պաշտօնական կղերը վարում են իսլամի գործերը շէրիաթի համաձայն, մեծ իմամին փոխարինելով: Ի՞նչ մեծ-մեծ արտօնութիւններ ունին իւլէմները, բայց և որքան ստորացած են իրանց գործերով:

Պաշտօնանկութեան երկիւղով, չաղ տեղերից չը բաժանւելու և բարձրանալու տենչով մոլորւած, ամբողջ բարձրադրի կղերը ստիպւել է համակերպւելու սուլթանի վարչութեան, մինիստրութեան հետ, այնպէս որ դա իր ազգեցութիւնը և վարկը կորցրել է երկրորդական իւլէմների, սովորաների և մօլաների աշքում և ժողովրդից չի վայելում նախկին յարգը: Թէ ենիշարութեան ժամանակ և թէ նրանից յնտոյ, նշանաւոր իւլէմները քանի գլուխները բարձրացրել են, բողոքել են ապօրինութիւնների դէմ, ժողովրդին, իրանց աշակերտներին զրգոել են հիւնքեարների դէմ, վերջիններս լոելեան, առանց ցոյցի, նրանց բռնել

կոտորել և գաղտնի ջուրն են գցել ձկներին կերակուրք վերջին դարում քանի քանի հազար սովորաներ ու մօլաներ կապկալաւած նաւեր են լցւել ու ծովերի խորքերը թափւել:

Սուլթան Մահմուդ Բ. ենիշէրիները կոտորելուց, ուռաց հետ խաղաղութիւն կապելուց յնտոյ, երբ ցանկանում էր ամկերգ կերպով մտցնել իր պետութեան մէջ, երոպական բարեկարգութիւններ, իւլէմները նրա առաջը կտրեցին, չը թողին այլ ևս ոչ մի քայլ առաջ գնալու: Պետութիւնը այդ ժամանակ ծանր պարտքի տակ էր և միջայներ էլ չը կար բէֆորմներն իրագործելու: Սուլթանի մտերիմները խորհուրդ տրվին, Քրանսիացիների նման, վագրֆները ծախել [մզկիթներին և իւլէմներին յատկացրած անշարժ կալւածներ], իսկ կղերին պետական գանձարանից թոշակ տալ, որով ոչ միայն պետութեան պարտքը կարող էր վճարել, բարեկարգութիւններ մտցնել, բերգեր, նաւեր շինել տալ, զօրանոցներ ու հասարակական հիմնարկութիւններ շննել, այլ այդ ընթացքով կը կարողանար բոլորովին ընկճել իւլամի կղերը: Եալիւրով վագրֆները, սուլթանը բոլորովին կը փշէր իւլամի իւլէմների ոյժը, որոնք իրանց ապրուտի, թոշակի սիրոյ համար, պարտաւորեալ աւելի շուտ պիտի ընկճէին, ձուլւէին պետութեան և նրա շահների հմա, որով աւելի արագ կարելի կը լինէր կատարել կարևոր բարեկարգութիւնները:

Բայց կղերը, հասկանալով սուլթանի միտումները, այնպէս ընդգիմութիւն ցոյց տրւաւ, այնպէս լարեց ժողովուրդը հիւնքեարի դէմ, որ սուլթանի ամհնամօտ անձնավորութիւնները նրան «գեաւուր» [ամհաւատ] համարելով, խորշում, հեռանում էին նրանից: Բանն այնտեղ հասաւ, որ թշւառ սուլթանը կորցրած իր հաւատը իրան շըջապատողների վրա, փախս էր տալիս բոլորից

և հանգստութիւն չէր գտնում: Միայն սիրելի քրոջը վստահած, նրա մօտն էր միայն ապահովապէս քնում, հանգըստանում շամլզափ բարձունքի վրա: Բայց այնտեղ էլ իւլէմների ձեռքը նրան դադար չը տրւաւ. մի գիշեր բարձերը բերանին դրին, խեղեցին նրան, մօտ քառասուն տարեկան հասակում, իր կեսանքի այն շրջանում, երբ նա անձամբ ամեն բան քննած, ամեն բան ուսումնասիրած, ամեն ծրագիր պատրաստած՝ ձեռնամուխ էր լինելու իսկական քէֆորմատոր դառնալ:

Երբ Քոլգարիայի սալսաֆներից յետոյ, 1876 թւին, սուլթան Ազիզը, Աւստրիայի կարլնէտի առաջարկութեամբ, եւրոպական պետութիւնների պահանջներին մի կերպ բաւարարութիւն տալու նպատակով, հրատարակեց մի նոր «Խ ա թ թ ը - հ ի ւ մ ա յ ի ւ ն», որով քրիստոնեայ հպատակներին իսլամի հետ կատարեալ հաւասարութիւն էր խոստացում, ամեն գործում, վկայելու իսլամների հետ հաւասար ձայնով, վերացում էր զինուրական տուքը (բէդէթը-ասքէրիէ) և գրա փոխարէն նոյն օրւանից ծնւած քրիստոնեայ մանուկները պարտաւորում էին զինուրակոչութեան ենթարկելու, կատարեց իսլամ ամբոխը, մզկիթների մէջ բողոք բարձրացրեց և իսլամների կողմից կատարեալ հալածածք սկսեց քրիստոնեաների դէմ յայտնապէս:

Այդ ժամանակ առիթից օգտւելով, սուլթանի հակառակորդ կուսակցութիւնը միացաւ իւլէմների հետ և ճնշում գործ դրեց սուլթան Ազիզի վրա: Մի քանի ցոյցերից յետոյ, սուլթան Ազիզը զիջաւ իւլէմներին և նրանց ընտրելիներին կանչեց, յանձնեց մինիստրութիւնը: Միհատ փաշան, իւլէմների հետ ձեռք ձեռքի տրւած, կղերի ձեռքով, օսմանեան պետութեան բոլոր մզկիթների իմամների միջոցով, իսլամ աղջարնակութիւնից գաղտնապէս, իր նախօ-

րօք պատրաստած, տպագրուած թերթերով ստորագրութիւններ հաւաքեց, որով ամբողջ իսլամ ժողովուրդը իր զայրոյթն էր յայտնում հիւքարների ընթացքի համար, իսլամի շէրիաթը ոտնատակ տալու պատճառով: Այդ հանրագրութիւնների վրա հիմնած՝ չէլիս-իւլ-իսլամ նայլուլահ էֆէնդին ֆէթւա տրւաւ՝ ցած իջեցնել իմամի աթոռից Ազիզ սուլթանին և նրա տեղ բարձրացնել Մուրադին, որից առջացած արքայասպանութիւնը պարզ է աշխարհին:

Այս իսկ պատճառներով սուլթանները միշտ վախենում են և չեն համարձակուում զուրանի, շէրիաթի հակառակ քայլեր անել, ժողովուրդին չը գրգռելու համար: Բաձրադիբ իւլէմներն էլ միջին ճանապարհը բռնած, երբեմն հիւնքերի կողմն են տատանում, երբեմն էլ ժողովուրդի, որով երկրին տիրում է կատարեալ անիշխանութիւն: Ո՛չ շէրիաթն է թագաւորում, ոչ էլ նորակազմ օրէնսդրութիւնները, խալիֆը, իւլէմները, վէզիրները այս կողմն էլ են թեքում, այն կողմն էլ, յայտնի բան է միշտ իսլամի շաշներին նախապատիւ տեղ տալով: Այդ երկդիմի, լիովին շէրիաթին հակառակ ընթացքը նկատելով իսլամ հաւասացեալները, չեն կարող հիւնքեարին խալիֆ համարել և դէպի նա զգւանիք չզգալ:

ՎԴ. Խսլամ ժողովուրդը, իւր պետական պարտաւորութիւնները կատարելուց առաջ, իր հասարակական իրաւունքների տէրն է ուղում դառնալ: Ամեն մի իսլամ, նուրադարձ, թէ գարեւոր իսլամի սերունդ, իւլէմ, թէ գունդիկ, երկրագործ, թէ արհեստաւոր, ծառայող, թէ պաշտօնակալ, անխափի իրան ժառանգորդ է համարում իսլամի պետութեան մէջ: Պէտք է իմանալ, որ գասակարգութիւնը իշխանականութիւն, զարմականութիւն, աղնւատոհմութիւն չէ ընդունում զուրանը. իսլամը իր հետևողների մէջ խարութիւն չի դնում. միայն ոչ իսլամներն են, որ չեն կարող

ԶԵՀԻՆՆԵՐԻ որդոց հետ հաւասար վայելել երկրի բարիքները: Պետութեան ամբողջ կարողութիւնը իսլամի սեփականութիւնն է, «բէյթիւլմալ» է. ոչ-իսլամը «բայյա» (երամակ) է երկրի մէջ, որը չերիաթի համաձայն, պետական, վարչական որ և է գործում ոչ ձայն ունի, ոչ կարող է միջամտն և ոչ էլ իր վիճակի դէմ բարոքել: Կառավարութեան մասնակցելու իրաւունք չունի «բայյան». սրան կառավարելու են խլամի որդիքը: Քըիստոնեայի կայքը, կարողութիւնը իւրացնելը, ուտելը, խլելը յանցանք չէ, որովհետեւ այդ ամենը խլամի սեփական կալածների արդինքից յաւելած է բայյայի մօտ մնացած. բայյայի զաւակները յափշտակելը բարեգործութիւն է, նրանց խլամացներու համար՝ յաւիտենականութեան մէջ աւելի շատ հիւրիներ են խոստացած խլամի ժառանգորդներին:

Սմեն մի լաւ բան խլամի զաւակներին է պատկանում, լաւ ձին, լաւ դէնքը, լաւ այդին, լաւ արօտատեղը, լաւ հաղուստը արժանի է զուրանի որդիներին, նրանք առանց այլ և այլի կարող են յափշտակել բայյաներից, որովհետեւ նրանք բայյաների կեանքը ինայում են, պաշտպանում են օտարների յարձակումներից և տեղաւորել են իրանց հովանու ներքեւ: Բայյա բառը հպատակ բառի իմաստով չէ ընդունում խլամը: Բայյան նրա աշքում մի տեսակ ֆէլլահ է (ինչպէս քիւրերն անւանում են քրիստոնեաներին), որը պիտի դատի, աշխատի իր տիրոջ համար և յանձնէ այդ աշխատութեան պտուղը ամբողջապէս խլամի զաւակներին, առանց մտածելու անվամ իր ցամաք օրապահիկի համար: Սմեն մի խլամ ձգտում է հրամայող զառնալ, պահանջող լինել ոչ խլամի գլխին, և բայյաներին իր երկնապարզ ստրուկ է համարում: Այս ամենը իւրաքանչիւր խլամի հոգու մէջ մտած, մարմնացած մոլորութիւն է մանուկ հասակից: Ընտանիքի շրջանը, դրացիութիւնը, կղերը, կառավարութիւնը և դաստիարակութիւնը այդ սպին են ներշնչել նրա մէջ և այդ ամենը նրա աշքում սովորական բան է դասել:

Խմլամ անհատը զարմանում է, երբ լսում է, որ իր բէսուլի տեղապահը, այդ բայյային ուզում է ստրկութիւնից բարձրացնել, կամ աւելի լաւ է ասել, իրան նւաստացնել և բայյայի հետ դասաւորել՝ զայրանում է, երբ նրան ազատ թոյլ չեն տալիս բայյայի աշխատածից լիուլի օգտւերու՝ կատաղում է, երբ բայյան ընդիմագրում է նրան՝ յափշտակութունների դէպքում՝ մորուքում է, երբ նրան դատի են հրամարում բայյային հասցրած շարիքի համար՝ արհամարհում է այն ատեանները, որտեղ զատաւորների և կառավարիչների շարքում տեսնում է բազմած բայյային՝ մերժում է այն վճիռները, որ չի կայացրել իր զաղին, չի հպատակւում այն հիմնարկութիւններին, որտեղ չերիաթի փոխարէն մի ինչ որ կանոնագրութիւն է զործածւում և չի ճանաչում այն խալիֆին, որը բէսուլի հրամանների հակառակ, չերիաթի աւանդութիւնների դէմ է զործում:

Վերջացնելով մեր խօսքը, եզրակացնում ենք: Օսմանեանների բախար զէսի անկումը թերեւելուց յետոյ, երբ պարբերաբար նրանց բանակները իրար ետելից սկսեցին գլխակոր վերադառնալ պատերազմական դաշտերից, երբ սրանց յաղթողները գրաւեցին խլամական ընդարձակ նահանգները և ի լրումն այդ ամենի, երբ հիւնքեարները խոնարհեցին, պարտաւորւեցին քրիստոնեայ պետութիւնների հետ կապած դաշնագրերի զօրութեամբ՝ վերանորոգութիւններ մացնել իրանց երկրում, թոյլ արւին քրիստոնեայ պետութիւններին միջամտելու խլամի երկիրների ներքին գործերում, մի խօսքով ուզեցին չափ ու սահման դնել խլամի անսանձ հարստահարութիւններին,— խլամ ժողովուրդը, կղերը չը կարողացան զիջանել, նկատելով իրանց սուլթանների անկումը, թուլութիւնը, որին և հետեւ խալիֆի երկրում աստիճանաբար չերիաթի զործագրութեան դադարումը, խլամականների սիրտն էլ քիչ քիչ սառեց դէպի օսմաննեանների հիւնքեարը, թէ պետութեան սահմանների մէջ և թէ զորւաց իսլամականները սկսեցին խորթ աշքով նայել սուլթանին:

Արդէն սրանտից 50 – 60 տարի առաջ նշանաւոր իւլէմներ գաղտազողի տարածում էին այն միտքը, թէ խալիֆայութիւնը դուրս է գալու հիմքեարների ձեռքից, թէ հիւնքեարների համար «խուզպէն» կարդալը մեղք է, յանցանք է, բայց ոչ ոք սիրա չէր անում հրապարակ դուրս գալ, ամենքն էլ սպասում էին Մահղիի երեալուն, որը պիտի զօրացնէր իրանց անընկճելի պետութիւնը, բարձրացնէր սանջագը շէրիփը և սասանեցնէր գեաւուրներին, տիրելով ամբողջ աշխարհին։ Խուզպէնը սպասում էին «ամենազօրաւորին». բէսուլի կտակի համաձայն նա պիտի դայ, հասնի և նրանց ազատէ մեղկացած իւլէմներից և անօրինացած սուլթանից ու վերանորոգէ խուզպի օրինական խալիֆութիւնը և վերահաստատէ չէրիաթը։

Երբ Եգիպտոսում, 1830-ական թւականներից յետոյ, Մէհմէդ-Ալի փաշան, օսմանեանների նախկին կուսակալը, ապստամբեց, զօրայաւ և տիրեց, բացի Եգիպտոսի հարեւան նահանգներից, Ասորիբէն ևս, այն երկրին, որտեղից կորէիչները, իւմիները հրամայել էին աշխարհին, իւլամականութեան սկզբնական դարում, երբ Մէհմէդ-Ալին՝ զամբ տիրելուց յետոյ մօտենում էր Փոքր-Ասիային, խուզպները սրտատրով սպասում էին, որ կը զնայ և կը խլէ հիւնքեարներից խալիֆութիւնը։ Բայց երոպան դադարեցրեց նրա արագ, արձակ և ազատ քայլերը Կ. Պոլիս դիմելու։ Վերջապէս սրանից 17 տարի առաջ, երբ Մահդին Սուլդանում երեաց և Սահարայում հաւաքեց իր զնդերը, այլ ևս խալամ աշխարհը կասկած չունէր, որ նա պիտի վերանորոգէր խալիֆութիւնը և տիրէր աշխարհին։ Բայց այդ անգամին էլ խալամի յոյսը վշրեցին անգլիացիները, Մահդիի ճանապարհն էլ կտրեցին։

Այժմ խալամ աշխարհը, հիւնքեարներից յոյսը կտրած, ձեռքերը ծալած սպասում է մի նոր Մահղիի, որը կարծում ենք և հաւատացած ենք, որ հրէաների սպասած Մէսիայից վաղ աշխարհ չի գալ։

# Յ Է Ր Ի Ա Թ

Թէ

# Կ Ո Գ Է Ք Ս Ո ՞

„Հաւատացեալին՛, ոչ ոքի հետ անկեղծ բարեկամուրիւն մի՛ կայէք, այլ միայն է ձեր մէջ երանի անպայման ձեզ խելքահուն կանեն երանից ցանկանում են ձեզ կործանել։”

Դաւան III Խմբան, 114 այեաթւ

# ՇԵՐԻԱԹ ԹՒ ԿՈԴԵՔՍ?

I.

Մարգարէ՛, կուիր գեաւուրների և  
կեղծաւորների դէմ հայսանձախն-  
դրուրնամբ և անզուր եղիր երանց  
նետ; Նրանց բնակարանը գեհենն է:

Դուրան սիւր. LXVI թէիրիմ 9 ալ.

Արտապատաճ „ՏԱՐԱՉԱՐԱՄԱՐԵՐԸ ԵՐԵՎԱՆ

Գրեթէ հարիւր տարուց աւելի է, որ արեւելում՝  
Քիւղանդական կայսրութեան աւերակների վրայ բարձրացած  
Օսմանեան պետութեան երկրներում՝ աշխատում են, ամեն  
տեսակ միջոցների դիմելով, պետական, հասարակական,  
տնտեսական, զինուրական և քաղաքացիական վերա-  
նորոգութիւններ, փոփոխութիւններ մտցնել, բայց այդ  
անվերջ ջանքերը համարեա թէ ապարդիւն, առանց զգալի  
հետեանքների են մնացել; Վերանորոգութիւնների համար  
արւած բոլոր հրովարտակները<sup>1)</sup>, հրատարակւած օրէնս-  
դրութիւնները, սահմանւած հիմնարկութիւնները՝ քննական  
հայեացը առաջ՝ նմանում են մի տեսակ խարէութեան,  
նենգամիտ և խարդախ քաղաքականութեան ցոյցերի, փրու-  
ռոյց, կեղծ, ոսկեայ առարկաների, որոնց կեղկի մէջ ան-

1) Խաթթէ-Հեւմայիւն 26 Շաբան 1255 (1838 թ.), Խաթթէ-  
Շէքէֆ 1 Զէմազէլ ախը 1272 (1856) թ., Խաթթէ-Հեւմայիւն  
23 Զէլհէջէ 1277 (1870), Ֆէրմանը-Ալի 1292 (1875) ևայլն:

պէտք աղբով է լրցրած: Եթէ լրջութեամբ և ուսումնասիրութեամբ հետեւնք երկրի պատմութեան, ժողովրդի մէջ կատարւած անցքերին և քրիստոնեաների վիճակին, մենք բարենորոգւած փոփոխութիւն չենք նշմարիլ: Անցեալ դարում քրիստոնեայի հետ ինչպէս որ վարւում էին, զրեթէ նոյնպէս են շարժում և այսօր:

Թէ տաճկաստանի քրիստոնեաները և թէ եւրոպացիք մեծ համակրութեամբ են դիմաւորել՝ ենիշըներին կոսուրելոց յետոյ՝ պարբերաբար հրատարակւած բոլոր հրովարտակներին և օրէնսդրութիւններին: Այդ վերանորոգչական հրովարտակները և օրէնսդրութիւնները նենորութեամբ, թէ ողեորւած յափշտակութեամբ, պարբերաբար ֆրանսերէն թարգմանել, Կ. Պոլսում օսմաննեան պետութեան հաշւով տպագրւել և ցրւել են արևմուտքում հետաքրքիր, բանիքուն և դիպլոմատիք շրջաններում: Ո՞ր յառաջադիմական կուսակցութիւնը, կամ անհատը սրտատրով չէր դիմաւորիլ բարբարոս արենելում, կիսավյարենի աղգերի մէջ, մոլեսունդ իսլամի տիրապետութեան տակ հրատարակւած և ժողովրդին, ազգաբնակութեանը կատարելապէս հաւասարութիւն խստացող հրովարտակներին: Այն հրովարտակներին, որոնք բարոգում էին՝ չնջել ժառանգական բէզութիւնները, աղալըները, խլել ի սլամի համար ական հոգ կ ող ե թ ը<sup>1)</sup> և վարչական իրաւունքները այդ

<sup>1)</sup> Խալահական հասկացողութեամբ, չէ՛թ (հետնական) վարդապետութեան համաձայն, խլամի զինուորներով նւաճած և ինքնակամ հպատակած բոլոր երկները հողերը կազմում են խլամի համայնքեր ընդհանրական սեփականութեանը—թէյթ-իւլ-մալ կամ Արազել—Ամիրէ (ամիրապետական հողեր) և վագֆներ: Այդ կալւածների երեսը մասնաւորների կապալով (զարալա) արւումէ ընդմիշտ օգտաելու տաննորդական հարկով, բայց ոչ սեփականութիւն եւրոպական իրաւարանական բառի մոլով (propriété), եսկ կալւածքը միշտ մնումէ թէյթ-իւլ-մալ: Եօմընը երբ նւաճ

ժառանգական առանձնաշնորհեալ դասակարգերից, որոնք մէկ-մէկ դէ բէ-լ է գի (ապստամբ, անզուսալ իշխան) դարցած չէին հպատակում ոչ մի իշխանութեան և կամայականութիւններով կեղեքում, հարստահարում, տանջում էին երկրագործ ու արհեստաւոր ժողովուրդը:

Երկրագործ դասակարգը, որ մինչև վերանորոգութիւնները իր հնձի համարեա կէսից աւելին յանձնում էր կալւածական ըէկին, կամ աղային, թէ որպէս համայնական, թէ որպէս պետական և թէ որպէս վարչական հարկ, կատարում էր այդ աղայի տնտեսական, տնական և մասնական ծառայութիւնները, աչքի արտասունքները, սրտի խորքից հառաջանքները զապած՝ տանում էր նրա ամեն տեսակ անարգանքները և զրկանքները, ինչ մեծ հրճանքով էր դիմաւորելու այդ խոստացւած օրէնսդրութիւններին և կարգերին, նկարագրելու կարիք չըկայ:

Որի սիրաը չէ բարափել սուլթան Մէջիդի օսմաննեան նահանգներին, գաւառներին, աւաններին և գիւղերին չնորհած ինքնավարութեան կանոնադրութիւնները կարդալիս: Վարչութեան բոլոր գործերում պետութեան ներկայացուցիչներին՝ վալիին, կամ միւղիրին այդ օրէնսդրութիւնների համաձայն տրւում է միայն երեք ձայն (վալին, օգնականը և քարտուղարը) ժողովրդի ութիւննը ձայնի դէմ: Հապա հասարակական և համայնական ընտրութիւնները,

ՃԵՐ Պարսկաստանն ու Եղիպատուը, բոլոր հողերը համայնականի վերածեց: Recherches sur la constitution de la propriété dans les pays Musulman p. 122 et 123, Worms. Ընդմիշտ կապալով օգտաելու երաւունք ունեցողը, կարող է եր երաւունքը ծախել, զբանի բայց միջեց գուրք եկած հանքին՝ ուկուն և գտնուած երեն գարձեալ տէրը թէյթ-իւլ-մալն է: Legislation musulman II p. 269 293 et 648 Perron. Դուքան սիւրիս II Բէդարա 27 այեաթ:

որքան մանրամասնութիւններով որոշում է անհատի ընտրելու, ընտրւելու իրաւունքները պաշտօնականների անսահման չէզոքութիւնը<sup>1)</sup>: Ինպէս չհիանայ մարդ, երբ կարդում է սուլթան Մէջիղի Պարիզի կոնգրէսից առաջ տւածհրովարտակը: Մարդու, անձնաւորութեան անձեռնմխելիութիւնը, ամեն տեսակ բէզեարից (ձրի աշխատանք), անորոշ տուրքերից, կամայական պահանջներից, սովորական փէշքեաններից և կաշառատութիւնից աղատութիւնը: Մարմական պատժի իսպառ բարձումը. ծեծ, քաշքել, դաղել թաս-անցկացնել, ջուր կապել (մէջքին), եղէդ դնել, անդամները կտրել, զլիսատել, կախել և ուրիշ ամեն տեսակ տանջանքների վերացումը—որքան սրտագրաւ է: Այդ քաղաքական, հասարակական, դատաստանական և քրէական օրէնսդրութիւնները կարդալիս, քրքրելիս, ում միաքը ակամայ չէ ընկել նապօլեօնի ցօները:

Դեռ 1866 թ. սուլթ. Ազիզը Պարիզից վերադառնալուց յիտոյ, լուսաւորութեան նախարարութեան համար հաստատած ընդարձակ օրէնսդրութեան հետ, 0 սման և աներ կ ը ու մ ուսումը պ ա ր տ ա դ ի ր հ ր ա տ ա ր ա կ ե ց: Այդ կանոնագրութեան համաձայն, հրամայւածէր լուսաւորութեան մինիստրին՝ բաց անել երկրի ամեն մի անկիւնում՝ գիւղում, աւաններում պարտ ու պատշաճ ուսումնական հաստատութիւններ, տարրական, միջնակարգ լիցէններ, մասնագիտական դպրոցներ և համալսարաններ: Այս ուսումնական հաստատութիւնների գոյութիւնը պահպանելու համար, նոյն թւին հրատարակւեց մի ուրիշ հրովարտակ, որ երկրի բուսականութիւնից մի տասներորդ հարկի [աշար] փոխարէն, ստացւի մի ութերորդը և յաւել-

<sup>1)</sup> Վելայէթների վարչութեան յատուկ կանոնադրութիւն ուժեղ կան նաև սուլթանների նշանաւոր հռովարտակները և հրահանդները. Կ. Պոլիս 1868 թ. Գլուխանեանի հրատարակ.

ւած հարկը սահմանւի լուսաւորութեան նախարարութեան ծախսիրին: Հէնց այն տարւանից սկսեցին քրիստոնեայ աղգաբնակութիւնից այս աւելւածով հարկը հաւաքել, այն ինչ մինչև այսօր, ուսումնարանները, պարտադիր ուսումն դեռ պիտի կարգադրւին...

Երբէք զարմանալու չէ, եթէ երկրի դրութիւնը քննենք իսլամի հայեացքով և հասկացողութիւնով, թէ ինչի շն կատարում, չեն գործադրում խոսացւած և հրատարակւած այդ օրէնսդրութիւնները: Այն ինչ փոխանակ գործադրելու այդ օրէնսդրութիւնները, հաւասարացնելու աղգաբնակութիւնը, պաշտպանելու անհատական իրաւունքները և ապահովելու քրիստոնեայ աղգաբնակութեան գոնէ պատիւն ու կեանքը, մենք երկրի ամեն մի անկիւնում գիմաւորում ենք հարստահարութիւնների, զրկանքների, կողոպւտների, բարբարոսական տանջանքների, անզուսպ հառաշանքների և գժոխային կոտորածների: Ամեն տեղ ժողովուրդը, քրիստոնեայ աղգաբնակութիւնը գրաստների պէս տանջւում են, բաշելով իրանց ուժից շատ բարձր հարկերի ծանրութիւնները և չնշասպաւելով այդ վճարումները հաւաքող անխիղճ մխտարների ճիրանեների տակ: Հարկեր, ոչ միայն պետական, հասարակական, այլ գրանց կըրկինից և գառապատկից աւելի մասնական պաշտոնների, քիւրդ բէյէրի, քաղաքայի աղաների, շէխերի, հարկահաւաքների և շըգիտեմ էլ ինչերի ձրի ծառաւթիւնները, անանուն հարկերը, անվերջ տուգանքները և վճարումները:

Թանգիմաթից առաջ ամեն մի հողաբաժին, գիւղ, կամ գաւառակ կազմում էր մի աղալը, կամ բէզլը, սրի տէրը իր օգտի համար պաշտպանում էր կողմնակի աւարառութիւններից, կողոպւտներից, մասնական անհատների ոտնագութիւններից իրան կալւածքի վրայ բնակւող բայաներին և նրանց սեփականութիւնները: Վերջանալով պալը-

ները վարչութիւնները նրանց փոխարինեցին: Պէտք է, որ սրանք պաշտպանէին երկրագործ և արհեստաւոր ժողովրդին, բայց սրանք վաթուն-եօթանասուն տարւայ ընթացրում չըկարողացան կանոնաւորապէս բարեկարգւել, որ կարողանային իրանց ստանձնած պաշտօնը, իրանց կոչման համեմատ կատարել: Այս պաշտօնականները, որոնք մեծ մասամբ նախկին ազաների, բէգերի ժառանգների գասից էին, իրանց մեղկութիւններից առանց ձեռք քաշելու, կեղերեցին եւ ժողովուրդը, եւ գանձարանը, իրանց ընկիրակից վեր առնելով նոյնպէս նորակոչ պաշտօննեաններին և սստիկաններին: Անտէր մնացած քրիստոնեայ ազգաբնակութիւնից ամեն մի խալամ, պաշտօնական համազգեստով, սստիկան, գէլրիշ, մօլա, քիւրդ թէ բէգ՝ իրան իրաւունքն է համարում՝ այդ թշւառ բայցից մի բան առնել, իրան մասը կորպել: Այսպէս որ այժմ ոչ պետական գանձարանն է կարողանում կարգին իր հարկը հաւաքել, ոչ էլ թշւառ գործաւորին և երկրագործին թողնում են, որ իր դառն աշխատանքով ձեռք բերածից կարողանայ իր ընտանիքը կերպակելու բաժին հանել:

Այդ բոլոր անկարգութիւնները, այդ աննկարագրելի տանջանքները և թշւառութիւնները նկատելիս, մարդ ակամայ մտածում է, թէ ինչի չեն գործադրում այն օրէնսդրութիւնները, այն բարենուզութիւնները, որոնք կարճ ժամանակամիջոցում աւերւած, կործանւած և քայլայւած երկիրը կարող են դրախտի վերածել: Ինչի մեռած տառ են մնացել այն մեծահնչյան և փուն հրովարտակները, այն ստարահատոր օրէնսդրութիւնները, որոնք հաստատել են հրատարակել են օսմաննեանների սուլթանները և թողնում են, որ թշւառ ժողովուրդը անվերջ հեծէ ու հառաչէ, սպայ ու մորմոքայ:

Այս հարցերին պատասխանելով, համարձակում եմ

ասել, որպէս մօտ ծանօթ իսլամական ժողովրդի, նրա վարդապետութեան, դաստիարակութեան, այդ երկրում ծնած, մեծացած, ուսումն առած, որ այս դարիս մէջ սուլթանների հրատարակած հրովարտակները և օրէնսդրութիւնները բառի բուն նշանակութեամբ, ան կ ա բ ե լ ի է գ ո ք ծ ա դ ա ր ե լ: Այդ հատորներով հրատակած օրէնսդրութիւնները կը մնան մեռած տառ, քանի որ օսմաննեանների սուլթանը աշխարհի վրայ գտնուող ընդհանուր սիւննի իւլամականութեան համար Ալլահի աշխարհի վրայ դրած շուքն է<sup>1)</sup>, քանի որ Կ. Պոլսում նստող փաղիշահը մահմէդականութեան հմամլ-աղամն է [մեծ-իմամ—առաջնորդ]<sup>2)</sup>, Ալլահի իսլամների համար կարգած դատաւորն է [հարիմ]<sup>3)</sup>, իսլամի համայնական սեփականութեան [թէթիւլ-մալի] աւանդապահը և Մահմէդի տեղակալն ու յաջորդն է:

Իսլամի վարդապետութեան շրջափակից դուրս, իսլամի դաւանանքներին ընդդէմ, ոչ միայն հիմնական վերանորոգութիւններ, այլ մինչև անգամ տարրական փոփոխութիւններ, չի կարելի անել. բանի որ այսօր մահմէդական աշխարհի համար օսմաննեան պետութիւնը ոչ թէ մի սակ թագաւորութիւնն է, այլ Համբաւամական կրօնական—համայնքի միութիւնն է կազմում, Մահմէդի հիմնադրած իսլամի ընդհանըական սեփականութեան պետութիւնն է և այդ համայնքի կրօնական սահմանադրութեամբ հաստատած վարչութիւնը: Պարզ է, որ իսլամիզի հիմնած, մահմէդականութեան համայնականութեան սեփականութիւնը

<sup>1)</sup> Извлож. Нал. мусулман. законовъденія ст. 84, 383 и 104. Барона Торнау.

<sup>2)</sup> Դուր, սիւր. II թեգարա 248. սիւր III Խմբան 25 այ. իւր. XLV Զասիէթ 17 այւաթ.

<sup>3)</sup> Դուր, սիւր. IV նիսա 62 այւաթ.

կազմող պետութիւնը չի կարող իսլամի դաւանութեան և վարդապետութեան հոգուն հակառակ օրէնսդրութիւնով և կարգերով կառավարւել:

Եթէ իսլամի վարդապետութիւնը սոսկ կրօնական, երկնային, վերացական սահմաններում սեղմւած լինէր, յայտնի բան է աշխարհական, երկրային վարչութեան համար, մարդկային հասարակութեան որոշած կարգերը և կանոնները մարդիկ դարձեալ կարող էին իրանց յարմարութիւնների համաձայն փոփոխել, բարեկարգել, բայց իսլամի հիմնադիրը, իսլամի հետեւորդ հաւատացեալներից կազմւած համայնքի կառավարութեան համար սահմաններ է երկնային, երկրային, քաղաքական, դիվլումատիքական, քրէնական, տնտեսական, գինուրական, անհատական և հասարակական, մի տեսակ կրօնա-քաղաքական օրէնսդրութիւն։ Այս օրէնսդրութիւնն է իսլամի դաստանագիրը<sup>1)</sup> և սա է կառավարել ու կառավարելու է իսլամի հետեւորդներին։ Այդ օրէնսդրութիւնից դուրս իսլամի աշակերտաշխարհային, մարդկային<sup>2)</sup> մաքի արտադրած ոչ մի օրէնսդրութեան չի կարող հապատակել և այդ չէրիաթով [երկնքից արւած օրէնսդրութիւնը] պիտի վճռի նրա բոլոր գործերն ու վէճերը։<sup>3)</sup>

„Երբ քեաֆիրներին (անհաւատ) դիմաւորէի, այն ժամանակ կտրուեցէ՝ բերանց գլխները, մինչեւ երանց բոլորավին ընկածիլը։

Ղուրան XLVII Մոհամմէդ 4 այ.

Մահմէդը իր դուրանով մի կ ը օ ն ա կ ա ն հ ա մ ա յ ն ք<sup>1)</sup> կազմեց, մի այնպիսի համայնք, որից հետըդհեաէ շատ կարճ ժամանակամիջոցում առաջացաւ մի ընդարձակ պետութիւն։ Ղուրանն է<sup>2)</sup> այդ համայնքի երկնային և աշխարհային օրէնսդրութիւնը, որը ամեն մի հաւատացեալ իսլամի հաւատարով և համոզմունքով Ալլահի նւիրական կամքի ու հրամանների արձանագրութիւնն է, որ Ալլահի հրամանով երկնքում հրեշտակները գրի են անցկացրել արարական լեզով<sup>3)</sup>։ Ղուրանը Ալլահի սահմանած կարգերի և օրէնքների գիրքն է, որով պիտի կարգադրեին աշխարհի վրայ ապրող ժողովուրդների բոլոր գործերը։<sup>4)</sup> Այդ ճշմարտութեան ձեռնարկով մարդիկ խաւարից լոյս, տպիտութիւնից ճշմարտութիւն, կրուստից փրկութեան ճանապարհի վրայ են բարձրանալու։<sup>5)</sup> Մի այնպիսի սուրբ գիրք է, որ երկնքից է, անեղծելի, անփոփոխնելի, անփոխարինելի, իմաստնագոյն, բուժիչ, սուտն անմերձենալի, չըհակասող, բացատրող ամեն բանի և դէպի ճշմարտութեան ճանապարհն առաջնորդող<sup>6)</sup>։ Մի սուրբ յայտնու-

<sup>1)</sup> Ղուրան սիւըիս III Խմբան 100 և 106 այեաթ։

<sup>2)</sup> „ „ „ XIII Զայեզ 17 այեաթ։

<sup>3)</sup> „ „ „ XIII Բայեզ 39 այեաթ։ սիւը. LXXX Ալէս 13—15 այ։

<sup>4)</sup> „ „ „ IV Նիսա 109 այեաթ։

<sup>5)</sup> „ „ „ II Բեկաբա 1 և 181 այ. և ՈՒՅ. XXVII Նէմել 2 և 78—79.

<sup>6)</sup> „ „ „ XII Յովաէլ 111 և սիւը. V Ուզուզ 18 այ.

— „ „ „ IV Նիսա և 84 սիւը. XI. Յազելաթ. 89 այ։

<sup>1]</sup> Ղուրան սիւըիս IV Նիսա 106 այեաթ։

— „ „ „ XIII Բայեզ 37 այեաթ։

<sup>2]</sup> „ „ „ III Խմբան 79 „

<sup>3]</sup> „ „ „ X. Զիւէթիւն 31 այեաթ։

թիւն, որ մաս մաս Ալլահը Գաբրիէլ հրեշտակապետի միջոցով թելազրեց Մահմէդին և վերջինս արձանազրելով տւեց իր կրօնական համայնքին<sup>1)</sup>, որպէս լրումն, վերջարան, կնիք և պսակ բոլոր սուսր գրքերի, որին ոչ մի փոփոխութիւն յաւիտեան էլ չէ հետեւու<sup>2)</sup>: Այս յայտնութեան գրքին առանց կասկածի, անպայման խորին համոզմունքով հպատակելու է խոլամի աշակերտող հաւատացեալը և այդ հպատակութեան՝ «իսլամ» անունը կրելու<sup>3)</sup>: Խոկ թերահաւատին, սուտ գիրք կարծողին, հերքողին և կամ սխալմունքները գանելու յանդգնողին սոսկալի յաւիտենական տանջանքների սպառնալիք է կարդում Մահմէդը<sup>4)</sup>:

Հուրանը բացարձակապէս պահանջում է իր հետևողներից՝ անպայման հպատակութիւն իր վարդապետութեան<sup>5)</sup>, հաստատուն հաւատը, խորին համոզմունք նրա բովանդակութեան ամեն կէտի համար<sup>6)</sup>: Այդ լոլոր առաւելութիւններով չօժտած մարդը խոլամ չէ<sup>7)</sup>: Ենթադրութիւնը և կարծիքը օրինագանցութիւն է և ճշշմարտութեան հակառակ<sup>8)</sup>: Մանդկային մորի ծնունդը, դատողութիւնը

<sup>1)</sup> Ղուրան սիւրէա ॥ Բէգար. 19 այ. սիւր. LXXXI Թէքրւէ 19—21 այեաթ.

<sup>2)</sup> " " XXXIII Ի՞շգար 40 այ. սիւր. IX Թողլէ 33 այ.

<sup>3)</sup> " " XLVIII Ֆէթէ 28.

<sup>4)</sup> " " VI Ինամ 21 այ. սիւր. VII Սըահիֆ 35 այ. ս. IX Թողլէ 74 այ.

<sup>5)</sup> " " X Յովի. 18 այ. սիւր. XVIII Փէահէֆ 55 այ. ս. XXXIX Զէմլէ 33 այ.

<sup>6)</sup> " " VI Ինամ 156 այեաթ.

<sup>7)</sup> " " LXIII Միւնաֆիդին 1 այ.

<sup>8)</sup> " " IX Թողլէ 75 այ. սիւր. XLIX Հիւջիւրաթ 14 այ.

<sup>9)</sup> " " XLIX Հիւջիւրաթ 13 այ. սիւր. XLV Զաւսիւր 31 այ.

չի կարող փոխարինել երկնային յայտնութեան, Ալլահի դրած օրէնքին<sup>1)</sup>:

Խոլամ ժողովրդի դաւանանքով, միայն Ալլահին հաճելի և աշխարհիս ամենից վերազանց համայնքը իրանք են կազմում<sup>2)</sup>, իսկ իրանցից գուրս բոլոր ազգերը, բոլոր կլօնական հասարակութիւնները պիզծ են<sup>3)</sup>: Թէև խոլամի կողմնակիցները ուղում են հաւատացնել, որ Ղուրանը հրեաներին և նազարեաններին [քրիստոնեա] անհաւատ կուպաշանների կարգը չի դասում, նրանց ջէհէննէմի [զեհենի] տանջանքներից ազատ է համարում<sup>4)</sup> և գրութիւն ունեցող [էհլի-իւլ-քիթար] է կոչում<sup>5)</sup>, բայց խոլամի վարդապետութեան գիրքը նախորդ սիւրիայով տւած առաւելութիւնը ջրում է յետագայ սիւրիաներով, երբ Մահմէդը զայրացած հրէանների<sup>6)</sup> դէմ և յուսահատած քրիստոնեանների հաստատամտութիւնից<sup>7)</sup>, նոր յայտնութիւններ ստացաւ երկնքից: Այդ սիւրիաներով քրիստոնեայ ազգերը անհաւատ կուպաշաններից շատ էլ գերազան չեն համարում, քանի որ պնդում են երբորդութեան խորհրդի վրայ, խոլամի վարդապետութեամբ նրանք միշշը են (Աստծուն ընկերներ տւող), կուպաշտ, պիզծ<sup>8)</sup>: Խոկ եթէ քրիստոնեան չի ճանաչում Մահմէդին որպէս մարգարէ և չի ընդունում զուրանը, անհաւատներից տարբերութիւն չունի<sup>9)</sup>:

<sup>1)</sup> Ղուրան սիւրէա VI Ինամ 115 այեաթ.

<sup>2)</sup> " " III Ինամ 106 այ.

<sup>3)</sup> " " III Ինամ 9 այ.

<sup>4)</sup> " " II Բէգար 59 այ.

<sup>5)</sup> " " IV Նիսա 169—172 այեաթ.

<sup>6)</sup> " " II Բէգար 154—157 այ. սիւր. IV Նիսա 152—160 այեաթ.

<sup>7)</sup> " " V Ուգուստ 17—18 այ.

<sup>8)</sup> " " 1V Նիսա 169 այ. սիւր. V Ուգուստ 77 այ.

<sup>9)</sup> " " III Ինամ 93 այ. սիւր. LXV Թէհըթ 9 այ.

Խոկ այդ քրիստոնեայ անօրէն և պիղծ պետութիւնները, խալամի խալիֆայական համայնականութեան դրացիները, երանց գիւական պիղծ օրէնքներով և կարգերով ուզում են խախտել Մահմէդի հիմնադրած Քէլամ Խլահի [Աստածային խօսք] շէրիաթը և այդ սուրբ օրէնքի փոխարէն ներմուծել իրանց սադայէլական մտքով յդացած ու չարագրած, կարծիքներով ու դատողութիւններով կազմակերպած օրէնսդրութիւնները: Մի այնպիսի միտք, որն ամբողջութեամբ նախատեսնեած և խստութեամբ արգելած է զուրանով խալամի աշակերտներին<sup>1)</sup>:

Խալամի մոլեռանդ ամբոխին և նրա կոյր հետեւող իւլէմներին շատ քաջ յայտնի է, որ սուլթանները նեղն ընկած, ճարահատ, ստիպւած են եղել բոլոր դաշնագրերը, կոնքրէտների վճիռները վաւերացնելու, որոնց հիման համաձայն պարտաւորւել են՝ տալ իրանց հրովարտակները և հաստատել օրէնսդրութիւնները:

Քանի որ սուլթանները արտաքին աշխարհի, հարեան թշնամի (զուրանը բոլոր պետութիւններին խալամական համայնականութեան թշնամի է համարում<sup>2)</sup>) պետութիւնների թնդանօթների և զրահակիրների ոյժի առաջ խոնարհելով են զիջել խմբագրելու և կնքելու այդ բոլոր վերանորոգութեան անւան տակ հրատարակւած կանոնադրութիւնները, խալամը երբէք նշանակութիւն չի տեւ այդ մրոստած, կամ տպագրուած թղթերին: Մահմէդականութեան հայեցողութեամբ և հասկացողութեամբ, այդ բոլորը կազմակերպել են ձեւականութեան, դրացի թշնամի պետութիւններին խարելու համար<sup>3)</sup>:

<sup>1)</sup> Ղուրան սեւընա III խմբան 114 այ.

<sup>2)</sup> " " LX Միւթականէթ. 1 այեւաթ.

<sup>3)</sup> Երբէք չեմ մոռանալ մի խօսմ պետական ծառայողի նկատողութիւնը այդ օրէնսդրութիւնների մասին, երբ ես ա-

Սուլթանների վարկը ընկել է խալամի աշքում, քանի որ նրանց իշխանութիւնը թուլացել է և ստորացել: Նրանք ընկնած գիջել են ստորագրելու շըրիաթի ընդէմ այդ դաշնագրերն ու օրէնսդրերը, բայց ճգնաժամում տրած դաշնագրերի անզօրութիւնը<sup>1)</sup>, և այդպիսի դէպքում խալամի խալիֆի կեղծելու և նենդելու արտօնութիւնն աշքի առաջ ունենալով<sup>2)</sup>, խալամի իւլէմները լոռութեամբ համակերպել են և սուլթանի արաբներին ակամայ համաձայնութիւն կեղծելով, օրինականի ընթացք են տեւ, Մահմէդի տեղականների այդ հրովարտակներին: Բայց այդ իւլէմներն իսկ իրանց ներքին շրջաբերականներով խալամի բոլոր կղերին, երբէք չեն թոյլ տեւ, չեն համաձայնել և չեն զիջել, որ այդ «մարդկային մտքերի ենթադրութիւններով և կարծիքներով խմբագրուած կանոնադրութիւնները—օրինադանցութիւնները»<sup>3)</sup>, գործադրուի խալամ համայնքի երկների որկիցէ անկիւնում, փոխանակ նրանց շնորհւած ՃԵՐԻԱԹի իւլլահին (Աստածային օրէնք)<sup>3)</sup>:

շակերտ ժամանակ կ. Պոլսում մեծ հետաքրքրութեամբ ուսումնականութեամբ է եւ լի և լի (օսմանեանների նոր օրէսդրութեանները), զեւ 1874 թ. մի մասնկութեան զործ էր վարում հայրս և մասնակցողի մատեանները կարգել ըեւըլու համար ի ու թ են ա փ է (Appellation)-ի կայարանի քարտազարներէց մէկին տուն էր հրաւելիք: Այդ մարզը զրադմունքս քննելուց յետոյ, վիճաբանութեան բունեց ինձ հետ և երկար թեր և դէմ խօսվեցաբանութեան բունեց ինձ հետ և երկար թեր և դէմ երկում ըեւըս պատասխաննեց ասեւով, որ—եթէ ուզում ես մեր երկում ասած երթար, գործ բանել և յաջողութեւն զանել ուսումնական թիւն ու մասնակութեան մեջ չեմ կարող գործադրուել: Պատարկ խարէութիւններ են: Փորձով այդ բանը ապացուցւած է:

<sup>1)</sup> Ղուրան սեւընա XVI նէկիլ 180 այ.

<sup>2)</sup> " " III խմբան 47 այ. սիւր. VIII Խնֆաալ 30 այեւաթ.

" " X Յով. 22 այ.

<sup>3)</sup> " " XIIX Հուջուբաթ. 13 այեւաթ:

Ճշմարիտ է, ու շատ ցանկալի, շատ փափակելի էր և օսմանեան սուլթանների համար, բարեկարգել իրանց պետութիւնը Եւրոպայում գոյութիւն ունեցող կարգ ու կանոններով և զօրացնել իրանց գահակալական իշխանութիւնը. այդ բարեկարգութիւնների հետ վերապահելով իրանց գերիշխանութիւնը, անրաժանելի խալամի խալիքութիւնն և իմամի-աղամի արտօնութիւնները: Եթէ մենք մանենք օսմանեան պետութեան վեց դարի պատմութեան, նրա քայլայման և անկման քննադատութիւնների մէջ, մենք կը զգանք, որ որքան փայփայւած և շոյւած անրջական ցնորք է եղել և իդէալական ցանկութիւն օսմանեան չիւնքեարների համար, աեսնել իրանց պետութիւնը վերափոխած, ինչպէս իրանց գրացիների երկիրները: Բայց Մահմեդի աեղականների այդ ցանկութիւնը մնք համոզւած ենք, որ կը մնան յաւիտեան լոկ իդէալական մտածութիւններ և խառութիկ երազներ:

Ինչպէս չըցանկար Սէլիմ Գ.-ը (1789 թ. գահակալ) վերանոգել իր պետութիւնը, երբ անզուսպ ենիշէրինները պատերազմներից գլխակոր փախչելուց յետոյ, երկիրը, աղգարնակութիւնը տակ ու վրայ աշխն, եղքօրը՝ չամիդ Ա. և հօրեղբօրը՝ Մուստաֆա Գ. գահից իջեցըն և արիւնահեղութիւնով ոչ միայն Կ. Պոլիսը, այլ մինչև անգամ իր պալատը ներկեցին: Սրտի խորքերում կուտակւած մաղձն ու անզուսպ վրէժը ինչպէս կարող էր թաղել իր մէջ Մահմեդ Բ. և շըջարդել, բնաջինջ շանել այն ենիշէրիններին, որոնք մի օրւայ մէջ իր աշքի առաջ երկու սուլթանների հօրեղբօրն ու եղքօր՝ Սէլիմ Գ.-ին և Մուստաֆա Պ.-ին խողխողել էին, որոնց տաք տաք արիւնը իր վրայ ցայտելով բինի շն էր ներկել և մարմինը այրել...

Ո՞ր մէկ սուլթանին յայտնի չէ այս վեց դարի պատմութիւնը, որի ընթացքում խալամի կղերը իրանց ձեռքում

խաղալիկ շինած խալիքներին, իրանց կամայականութիւններով երկիրը և ազգաբնակութիւնը կեղեքել են, սպարապետներին ու վէզիրներին, ներքինապետներին և ենիչեր աղաներին իրար դէմ զինելով՝ արքունիքը աղմկել, պետութիւնը քայլայի և կործանել են: Ո՞ր մէկ սուլթանը չանացել, չի աշխատել թուլացնել խալամի կղերի զօրութիւնը, որի դէմ ինքը միշտ խրատիւակի դեր է կատարել: Կամ ինչի հաճելի շպիտի լինէր այդ սուլթանին՝ զսպել կը օնամոլ ամբոխին, մեծամիտ կղերին և անսանձ ենիշէրիններին և գրանց գլուխն արքայավայել անկախ իշխել: Հապա վեց դարու ընթացքում թշնամի պետութիւնների հետ կատարւած հարիւր վաթսունը վեց սոսկալի պատերազմները, արիւնահեղ կոտորածները, անզութ գարբարութիւնները, սրոնցից շատերը տարիներ է ակել, թշւաս, անզէն աղգարնակութիւնների դէմ: Հալածւած, տանջւած, սոսկալի աղգարնակութիւնների ենթարկւած հպատակ ազգաբնակութեան հարկանըների եօթանառուց աւելանգամ կատարած ապստամբութիւնները, սրանց դէմ հրովարտակով յայտարարւած պատերազմները, սրանց զօրից հրովարտակով և թնդանօթներով ամայացըներ են զօրով, զըահակիրներով և թնդանօթներով ամայացըներ են զաւալներ, նահանգներ ու տշխարհներ, բնաջինջ արել ցեղեր գաւառներ, նորանգներ ու տշխարհներ, տարբեր գաւառներ ու աղբեր: Խոկ ենիշէրինների՝ բացի գաւառներում, նահանգներում կատարած և յաւիտեան մոռացութեան տրւած անթիւ, անհաշիւ ապստամբութիւնները եօթանառունից աւել անգամ Կ. Պոլսում արած անզութ կոտորածները, ահոելի ապստամբութիւնները և զարհութելի սրախողխողումները, որոնց թրին Պոհւել են՝ ինչպէս նշանաւոր վէզիրներ, պաշտօնակալներ, իւլէմներ, զազասքէրներ ու Զէլինիւլիսլամներ, նոյնպէս և ներքինապետներ ու սուլթաններ: Միթէ կարող էին զանցառութեան ու մոռացութեան տակ օսմանեան պետական առաջակալական տոհմի անդամներն ու գահակալներն, այդ սոսկալի արկածները

Օսմանիան երեսունըհինգ սուլթաններից հինգը միայն իրանց բնական մահովն են մեռել, երկուսը պատերազմներում, իսկ մնացեալները կամ հրապարակով գահից փար են առնել, գլխատւել, տանջւել ու սպանւել և կամ գաղտնապէս պալատում ներքինիների ձեռքով խեղդւել, թունաւորւել: Այս բոլոր անցքերի պատմութիւնը, երկը պարբերաբ ամայանալը, ազգաբնակութեան սպառւիլը, արդիւնաբերութեան ցամաքիլը, պետական եկամուտների նւազելը, նամանաւանդ իրանց՝ գահակաների անհաստատ սոսկալի վիճակը և պետութեան կործանման սպառնալիքը՝ իրաքանչիւր նոր գահակալի ստիպել է մատածել, խորհել և այդ անիշխանութեան, բոհակալութեան և կամայականութիւնների առաջն առնել զրաքան մի օրէնսդրութիւնով. բայց այս մտքերը միայն բաղը և յուսախար երազներ են մնացել սուլթանների համար և մնալու են...

Ինչպէս ասացինք, իրանք՝ Օսմանիան սուլթաններն էլ համամիտ էին և հոգւով ցանկանում էին իրանց գրացի պետութիւնների ստիպունըներին զիջած վերանորոգութիւնները իրանց երկրներում գործադրելու: Այդ թշնամիների ստիպմունքները սուլթանները իրանց ցանկութիւնների կատարման մի միջոց, մի զինք էին համարում, որոնցով ստիպում էին իսլամ իւլէմներին, իսլամի քէ յթ-իւլ-մալ ի փրկութեան, ապահովութեան և պետութեան յանկարծահաս կործանումից ազատւելու համար, զիջանել և պարտ ու պատշաճ քէ թւաները տալ: Բայց քանի որ ճգնաժամում կատարւած և անօրէն, պիղծ քրիստոնեաների առաջարկութիւններովն էր սահմանւած այդ բոլոր կանոնագրութիւնները, մոլեռանդ ամբոխը վերանորոգութիւններին զիմագրել է մեծ ատելութիւնով:

Մահմէդը առաքելական (բէսուլ) և մարգարէական (նէրի) դերից դուրս, որպէս առաջնորդ (իմամը-ազամ) իս-

լամ համայնքի, իր կեանքի ընթացքում այնպիսի պատերազմական գործերի առաջնորդեց իրան հետեղողներին, այնպիսի յաջողութիւններով նւաճեց, խոնարհեցրեց, զսպեց հակառակորդներին և որպէս ղենապեա ու դատաւոր (հաքիմի-շէրի) այնպիսի խելամտութեամբ քննեց ու դատեց, բաշխեց ու բաժնեց, բաւականացնելով խաղաղացրեց, որ իրան յաջորդող իսլամի առաջնորդներին, իր կենդանի գործերի օրինակներով մի լայնարձակ պետութեան սոսկարէդ բացեց: Այդ յաջորդները հետեւելով իրանց հիմնադրի օրինակին, հասան նրա ըղձերին, ընդարձակելով իսլամի նորակազմ պետութեան սահմանները Միջերկրականից մինչև Գանգէս, Հայաստանից մինչև Հարէշստան, ամրող Ափրիկէի հիւսիսային ափից մինչև Սպանիա և Ֆրանսիա, բաղմացնելով իրանց հետեղորդների խմբերը: Մահմէդի անմիջական յաջորդները՝ Աբուէբերը, Էօմէրը, Օսմանը, Ալին ու Մոււաւին մի գարի ընթացքում այնպիսի ընդարձակ ծաւլի հասցըին այդ պետութիւնը, իսլամի հետեղորդների թիւը այնպիսի առասպելական բարդութեամբ բազմապատկեց և իսլամի վարդապետութիւնը այնպէս ամրապնդեց այդ ամրոխի սրախ խորքերում, որ ուշիմ հետաքրքրւողը չի կարողանում այդ բոլորին առանց կասկածանքի հաւատալ, թէկ փաստերն անհերքելի են:

Հետեւելով իրանց թէկ մելամաղձոտ, բայց հաստատամիտ օրէնսդրի գործունէութեան, կենդանի օրինակին, այնպիսի անձնազրութիւններով և այնպիսի յամասութիւններով առաջ տարան Մահմեդի գրօշակը նրա անմիջական չորս յաջորդները, որ նրանց յիշատակը անվերջ դարերով անջնջելի է մնալու ոչ միայն իսլամի հետեղորդների, այլ համայն մարդկութեան սրտում: Խոլամի իմամները անմիջապէս գուրս եկան աւագուս Աբաբիայից, մատան բազմաշաղկերի մէջ, փոփոխելով իրանց աթոռը զամից բաղշատ ազգերի մէջ, փոփոխելով իրանց աթոռը զամից

դադ, Գահիրէ և վերջապէս Կ. Պոլիս: Խալիքութիւնը ինչպէս չէր կապւած քաղաքների հետ, նոյնպէս յատուկ չէր որոշ տոհմի. Նա Կորէշներից Խւմմիներին անցաւ, Երասմաններից՝ Սելջուկներին, Մեմուկներից՝ Օսմաննեաններին: Այդ տեղափոխութիւններից և յափշտակութիւններից ոչ մի վնաս չըկրեց իսլամը, այլ ընդհակառակը թարմացաւ, ճոխացաւ, գօրացաւ: Եթէ մի հարստութեան ձեռքում նաքայրայւել էր, թուլացել, միւսը նրան կենդանացրեց ու բարձրացրեց: Եթէ մի հարստութեան պէտերը չեղեցան իսլամի նախասահմանած օրէնքի շաւդից, ամբոխն ուրիշ միարժանաւորի կողմը յառեցաւ և կամ Մահդիի սպասեց, որ գայ վերահաստատէ Ալլահի տածած անփոփոխիլ չէրիաթլ: Այս բոլորը զուրանի վարդապետութեամբ և նրա հետեւողների համոզունքով միայն Ալլահի կամքով և նրա նախասահմանութիւնների համաձայն էր կատաւում, քանի որ Ալլահը ում որ կամնումէ, նրանէ տալիս ոյժ, կարողութիւն, փառք և ճոխութիւն<sup>1)</sup>:

Թաղ իսլամի ոյժը աշխարհի որ կորմը որ պատահի՝ զօրեղանայ, թաղ իսլիքական կահը ինչ տոհմի ձեռքուղում է անցնի, միայն թէ իմամը-աղամը պաշտպանէ համիսլամութեան շահները, թաղ հաստատապէս պահէ Ալլահի չէրիաթլ, իսլամի հետեւորդները նրան կըպաշտպաննեն, և նրան հետեւով, պատրաստ են զոհողութիւններ անել և կեանքերը զոհաբերել<sup>2)</sup>:

Իսլամի չէրիաթլ, նրանց հաւատքով, երկնառաք մի

<sup>1)</sup> Դուքան սեւբես II թէքարա 118, 248, 252 այեւթ.

— " " III նմբան 25—29 այ.

<sup>2)</sup> " " XXIII Հաջ 77 այեւթ.

— " " III Խմբ. 163—15 այ. և IV Նիսա 97 այ.

— " " IX Թէոլլէ 20 այ. LVII Հէդիւ 10 այ.

օրէնսդրութիւն է, մի սահմանադրութիւն է իսլամի հետեւորդների իրար մէջ ունեցած յարաբերութեան, ժողովրդի ու նրա խալիքի մէջ, իսլամի և նրանցից գուրս ազգերի յարաբերութիւնների համար և իսլամ ժողովրդի ու իր Ալլահաբերութիւնների լամար մէջ: Այդ չէրիաթլովն է կառավարում Ալլահը երկինքն ու երկիրը, մարդիկն ու ջինները<sup>1)</sup> և դրանշանախեցն անգամ մահկանացուն փոխելու, ծուելու իրաւունք չունի<sup>2)</sup>: Ալլահը և նրա ըէսուլը (առաքեալ) միայն կարող են բացատրել ու մեկնել զուրանը<sup>3)</sup>:

Այս վարդասետութեան հաւատալիքները այնպիսի խոր արմատներ է գցած իսլամի հետեւորդների հոգու խորեցարմատներ ու արիւն է դարձել մոլեւանդ ամբոխի համար, որ ոչ թէ սուլթանի հրովարտակները, հաստատած օրէնսդրութիւնները, այլ մինչև անգամ եւրոպական զրահակիւնները, թնդանօթներն և ուժանակները չեն կան զրահակիւնները, թնդանօթներն և ուժանակները չաղաքացիները ու հոգեկան զգացումները ջախջախել, կարող այդ մտաւոր ու հոգեկան զգացումները ջախջախել, կարգութեան կանոնները: Իսլամի պետութիւններ կարելի է կարգութեան կանոնները: Իսլամի պետութիւններ կարելի, քայլայել, բաժաշտ ու շատ հեշտութեամբ կործանել, քայլայել, բաժաշտ, իսլամի համայնական երկրի վրայ նորանոր պետութիւններ, իսլամի համայնական երկրի վրայ նորանոր պետութիւններ, հիմնել, կիսկսել այլգաւան ազգերի մէջ, բայց երբէք ներ հիմնել, կիսկսել այլգաւան ազգերի մէջ, չի կարելի խալիքութեան ամբողջութիւնը պահպանելով, չի կարելի

<sup>1)</sup> Դուքան սեւբես LI Շէրիւթ 56 այ.

— " " XXII Զիւ. 11—15 այ.

— " " XLVI Ա.Հ.ա.փ 28—30 այ.

<sup>2)</sup> " " VI Ինամ' 115 այ.

<sup>3)</sup> " " III Իմբան 5 այեւթ.

— " " IV Նիսա 62 այեւթ.

— " " XXV Ֆուքան 35 այեւթ.

— " " VII Ա.Ծա.փ 15 այեւթ.

Նրա պետութեան միջից շէրիաթը վերցնել, դրա փոխարէն ուրիշ օրէնսդրութիւնով երկիրը կառավարել, կամ բարեկարգել – վերանորոգել, յայտնի բան է բառի բուն նշանակութեամբ:

Դարերի, երկար ու ձիգ դարերի անընդհատ քարոզութիւնները, պարբերաբար մեջնած, բացարւած վարդապետութիւնները, անդադար, տարւայ ամեն մի եղանակին, իւրաքանչիւր տօնին ու ծոմին կատարւած հանդէսների, զոհարմարութիւնների և արարողութիւնների կրկնութիւնները այնպիսի համոզմունք են արծարծել իւրամի հետեղների ուղեղի, արիւնի, ջղերի ու զգացումների մէջ, որ այդ հաւատքը, դաւանանքը թուլացնելու, մեղմացնելու և մարերի ազատ շարժում առաջացնելու համար, դարձեալ այգպիսի երկար ու ձիգ տարիների քարողների կարիք կայ: Նախնական թերահաւատ, կամ բռնութեամբ իսլամ ընդունած ժողովրդի որդիքը այնքան գրկանքի և տանջանքի են մատնել, որ նրանց սերունդները կամայ, ակամայ հաստատահաւատ մոլեռանդներ են ծնւել, չնորհիւ ընդհանրութեան մէջ տիրող մոլութեան: Թէ միջին, թէ նորագոյն դարերում, իսլամի քաղաքների, աւանների և նոյն իսկ գիւղերի մզկիթների բակերում կառուցած մէղբէսէններում, այնքան բիւրաւոր և միլիոնաւոր մարդկային ուղեղներում ծածանել է զուրանի այաթներն (յօդւածներն) և սուրբիաներն (գլուխները), իրանց նախալաշարմունքներով և աւելորդապաշտութիւններով, որ սերդնից սերունդ այդ միստիքական քաօսում շղթայել է իսլամի հետեւորդների միտքը: Հապագիական, ժողովրդական գիշերային հաւաքումները, ուր մի աղօտ ձէթի ճրագի լոյսի շուրջը հաւաքւած յիսունով և հարիւրով՝ ամբոխը իւրան ծերուկներով, հասակաւորներով, երիտասարդներով և մանուկներով՝ անդադար պատմել են, նկարագրել կրօնական, դաւանական, բարեպաշտական և

դատաստանական արկածներ և դրանց աղդեցութեան տակ մտամոլորել:

Անջնջելի է ծնողների տնական դաստիքակութիւնը, զաւակներին սովորեցրած աղօթքները, դաւանական պարտականութիւնները: Հաղիւ է պատահում մի միւսլիմ, որ չըգիտենայ իսլամի երեսունը երկու պատւիրանները, թնդ սովորական աղօթքները, որն անդայման գիտէ իւրաքանչիւր իսլամ, եօթը տարեկան հասակից: Ամեն մի միւսլիմ մայր իր որդուն հազար անդամ նկարագրած կրլինի իսլամի հերոսների՝ Ալիի, Էօմերի, Օսմանի արկածները և աղջկան Փաթիմէի, Քաղիչէի, Ալիչէի և ուրիշների պատրաստակամ ծառայութիւնները իրանց ամուսիններին: Արաբական տաւերը կարծես ստեղծւած լինէին միմիայն իսլամի բարութիւններից և կենսագրութիւններից ուրիշ գրածների մարդ հազիւ է պատահում իսլամի բնակւած բոլոր երկիրների մէջ: Անասելի զոհողութիւններով և ջանքերով յունարկնից արաբէրէնի թարգմանւած, կամ փոխադրած գրքերը իսլամի հետեւողների մէջ որոնելը զուր բան է, այգպիսի գլուխների տարածման առաջ պատւարի նման կանգնել են գլուխների բրանք երբէք չեն թողել, որ ընդհանիւրանան այգպիսի գրւածները, և մոլեռանդութիւնը, նախարանան այգպիսի վաղուց ջնջել անհետացըրել է այգպիսի հաղպաշտամունքը վաղուց ջնջել անհետացըրել է այգպիսի հաղպաշտութեամբ գործերը<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Թաւերեգում միւշահեղե ապարանկում մի ախունդի մօտ և նստած էի, երբ մի գեւզացի կալածառէր եկաւ նրա մօտ և ծոցից գուստ բերելով շորի կտորի մէջ փաթաթած մի գերեցնան առաջարկեց քննելու: Ախունդը ձեռքը երկեցուց գերըն առաւ, բայց մատելի ճայրով այնպէս էր բռնելու որ կարծես այդ գերը գարշելի նեխուած դաղմանի գլաւի լինէր: Ախունդը երբ մօտ-

## III.

Միայն հզօրագոյն, իմաստնագոյն Աղամից օգնութեան, որպէս զիանաւառների մարմբները անդամանատէք, երանց յաշրահարէք, որ առանց ցանկութիւններին հասնելու ետ դառնան:

Դուքան III Խմբան 122 այեաթ.

Խալամի հետեօրդը իր կրօնի հետ այնպէս պինդ է կապւած, խոլամի աշակերտը այնպէս կոյր հալատակ է իր դաւանանքին, իր հաւատքին, որ չի կարող իր խալիփայութեան մէջ ուրիշ մարդկային մտքի ծնունդով կազմած գրքերի և օրէնքների հաւատ ընծայել, համոզում գոյացնել և հնազանդել: Խալամի հետեօրդը կուրաքար, առանց բացատրութիւններ լսելու, գոռում է.—Մէկ է Ալահը և մէկ է Ճրիաթը. թէ երկնքում և թէ երկրի վրայ <sup>2)</sup>:

Յուց գըթե առաջի երեսը իր ակնոցաւոր աչքերին, մի քանի տող կարդաց ու թէրթէց, իսկոյն մատերի միջեց գերքն ընկաւ և նա սկսեց մնանջել մեղայական ազօթքներ: Ես ապշեցի, իսկ ախունդը կատաղի հայեացըով գայըոյթը կալածատիրոջ յայտնելուց յետոյ, օջախի առաջից ունելին վերսաւաւ, նրանով ըռնեց այդ գլուրւած պիտի գերըը, վերցրեց և ուղարկի ծառային տեսց հրամայելով—Տ' ը, իսկոյն գցի՛ր արտաքնոց: Ախունդը իսկոյն ձեռքերը լաց և հրամայեց սենեակի թաղքեր վրայ փռւած չիթը լւանալ տալ: Երբ առանձին մնացներ ախունդի հետ, շատ ստիպեցի, որ ինձ յայտնի, թէ այն ինչ գերը էր, որ այնպիսի ստիկելի վիճակի գատապաւառւեց: Ախունդը ինձ բացատրութիւն ըլքողացաւ տալ բանի որ ինքն էլ ըրդեսէր, թէ ինչ գերը էր, միայն ասաց:—Բաւական է, որ կը օ՞ն ական գերք չէ:

<sup>2)</sup> Դուքան սիւթիա 11 թէգարա 2, 158, 256 այ.

- " " VI Կնար 115 այ. սիւթ. 9 թէգարէ 31 այ.
- " " XI Հուդ. 15 այեաթ.
- " " XXVIII Գէսէս 88 այ.
- " " XX թէգարէ 14 այեաթ.

Դուքանի թարգմանութիւնները կարդալով, զուրանի օրէնսդրութիւնների հետ ծանօթանալով, զուրանի հիման վրայ հաստատւած հաղիսները և սիւննան ուսումնասիրելով, զրանց մասին ահազին գրականութիւն ձեռքի տակ ունենալով, զարմանալի է, թէ ինչի եւրոպանկան դիպլոմացիան պնդում է, որ այդ երկրում կարողանայ, թէ բարենորոգութիւններ մտցնել և թէ պահպանել իսլամի խալիֆութիւնը իր ամբողջութեամբ: Պնդում են, խալամի համայնական երկրներում, եւրոպայում գոյութիւն ունեցող հիմունքների վրայ, ժողովրդական հաւասարութիւն սահմանել, կրօնական անխըտրութեան հայեացքով, պետութեան բոլոր ազգաբնակութիւնը հաւասարել:

Եւրոպացի գիպլոմատները, վարչական գլուխները մտածում են. թողնել խալամի զուրանը-շէրիաթը, որպէս կրօնական վարդապետութեան մի ձեռնարկ, Օսմանեան երկրներում քնակուղ իսլամի հետեօրդների համար, յայտնի բան է քրիստոնէական մասշտաբով, իսկ նոր պետական օրէնքը ներ սահմանել երկրի ամբողջ ազգաբնակութեան համար և երկիրը կառավարել այդ նորահաստատ օրէնքներով:

Զարմանալի է նոյնպէս, որ եւրոպան—գիպլոմացիան գիտենալով որ այդ պետութիւնը, երկիրը ամբողջութեամբ պատկանում է Մահմէդի հիմնած կրօնական համայնքին, սուլթանը հչ թէ եւրոպական թագաւորների, կայսրների նման ինքնակալ՝ անսահման տէր էր այդ երկրին, այլ մի խալիֆ է (տեղակալ), մի աւանդապահ իսլամի թէ յ թ-ի ւ բ-մ ա լ ի ն [համայնական գոյրին], մի առաջնորդ [իմամը—պալամ] իսլամի հետեօրդներին և սահմանավակած դուրսանի օրէնսդրութիւններով այդ աստածպետական կառավարութեան գլխին, որն առանց հետեօրդների կամքն ու խորհուրդն հարցնելու ոչ մի գործ չի կարող սկսել <sup>1)</sup> , ուղղում են այդ սուլթանին աշխարհային այնպիսի իրաւունք:

<sup>1)</sup> Դուքան սիւթիա III Խմբան 153 այեաթ.

ներ սահմանել և այդ իրաւունքները պաշտպանելու համար զօրքով, դրամով, զրահակիրներով և թնդանօթներով աջակցել, որ նա իր խաղիֆական իրաւունքի հակառակ գործէ և իրանց հաւասար մի ինքնակալ դառնայ, պահպանելով միանգամայն Մահմէդի տեղակալութիւնը:

Եթէ քննենք եւրոպացիների պահանջների էական կէտերը և իսլամի վարդապետութեան դրանց վերաբերեալ անհամբերատարութիւնը, զիջանելու անհնարաւորութիւնը, դուրանի անմիջական որոշումներով և պատւէրներով, մենք աւելի որոշ եզրակացութիւնների կը հասնենք: Բարենորոգումների զլսաւոր կէտը այն է, որ - հաւասար իրաւունքներ ունենան, իսլամի պետութեան մէջ ապրող իսլամ և ոչ-իսլամ ազգաբնակութեան անխտիր բոլոր անհատները:

Բարենորոգումների ամենաէական և դժւար կէտն այս է. իսկ այդ մասին իսլամը զիջանել չի կարող, քանի որ վարչական դեկլ իր ձեռքումն է:

Իսլամի վարդապետութեամբ, նրա հաւատքի, դաւա-նանքի համաձայն, իսլամի հաւատացեալները ընդհա-նուր իսլամական—համայնական բոլոր իրաւունքներին և կարողութեանը հաւասար ընկերակից և բաժնեկից են, մինչև անգամ այդ դաւանանքը մի ժամ, մի բոլէ առաջ ըն-դունողը<sup>1)</sup>: Իսլամի հետևողը որպէս բաժնեկից իսլամի համայնական հարստութեան (Բէյթ-իւլ-մալ), կարողութեան և պետութեան, նա տէ ը է նոյնպէս համայնքի շարժական, շնչական և անշարժ հարստութեան: Իսկ իս-լամի քայլ ան (իսլամի անասունների հօտերը, նախիրները), այսինքն այն ոչ-իսլամները, որոնք իրաւունք ունին իսլամի տիրած երկրներում ապրելու<sup>2)</sup>, իսլամականութեան գլաստ-

<sup>1)</sup> Դուռան սեւըլա ՎIII Խնֆաւ 76 այ.

<sup>2)</sup> " " II Прилож. Корана Горд. Саблукова  
1879 ց. стр. 52—53.

ների նախիրն է<sup>1)</sup>: Խալամական վարդապետութեամբ, զուրանի որոշ պատւիրաներով, այդ քայլ ան երը [անա-սունների հօտ] իսկապէս պիտի ամբողջական գլխատութեան ենթարկէին, մինչև ամենավերջին անհատը, բայց Ալ-լահը՝ Մահմէդի քարոզած զուրանի հետևորդների մարմնա-ւոր բարիքների ըղձերին բաւարարութիւն տալու մաքով՝ թոյ-լատրել է, որ զրանք ալլրեն<sup>2)</sup>, այն պայմանով, որ իրանց զոյքը, կեանքը պարտաւոր (զի մ մ ի) մնան իսլամի հետեւրդներին<sup>3)</sup>: Ամեն մի քայլ ան (անասունի հօտի անհատ), ամեն մի զի մ մ ի իր գոյքը և խնայւած [սպանման չեն-թարկած] կեանքը պարտաւոր է իսլամին և այդ կեանքը վարելու, վայելելու համար, կարձ խօսքով ապրելու համար, դեռ պարտաւոր է իսլամի Բէյթ-իւլ-մալի արկիին ամեն տարի զլխագինը վճարել (Չէղիյէ)<sup>4)</sup>: Գլխատութիւնից ազատաւելու, իսլամի տիրած երկրում ապրելու, օգը չնշելով ապականելու համար, ամեն տարի, բայցն պարտաւոր է կեանքը իսլամի համայնքից գնել, որոշ հարկը տալով:

Իսլամի պետութեան հարկան կառավարութիւնների թնդանօթները ստիպում են, որ իսլամի երկրի և երկնի օրինական ժառանգները զիջանին, իրանց անտառուն ները ի հօտ երին, գոյութիւնները պարագաներ կեանքը վայելելու և օդն ապա-կանելու համար հարկ (Չէղիյէ) վճարող գորաստները իսլամին չնորհ-ւած այս աշխարհի մարմնաւոր բարիքների հետ բաժանոր-

<sup>1)</sup> Դուռան սեւըլա VII Արակի 178 այ.

<sup>2)</sup> " " XXV Ֆուրգան 46 այլաթ.

<sup>3)</sup> " " III Խնֆաւ 68—72 "

<sup>4)</sup> " " IX Թէօվրէ 20 "

<sup>4)</sup> " " IX Թէօվրէ 29 "

դակեց ճանաչելու։ Ի՞նչպէս կարող է մի հաւատացեալ խալամ, առանց իր հաւատքը խախտելու, իր դաւանանքը կասկածանքի մատնելու, իրան հաւասար դասել մի պիղծ, ստոր, անարդ էակ, որ իր կրօնական հասկացողութեամբ և խորին համոզունքով, վայրի գագաններից էլ խաւարամիտ է, բանի որ չի զգում իր կուրմտութիւնը, գրկաբաց չի ընդունում զուրանի լուսաշատիդ վարդապետութիւնը<sup>1)</sup>։ Ի՞նչպէս կարող է զիջանել իսլամը և պարզապէս զուրանի այեաթներով իր ազատ տրմադրութեանը տակ զրւած այդ գագաններին, դրաստներին, պիղծերին բարձրացներով իրան հաւասարեկ։ Այն բայաները, որոնց ապրելու և չապրեցնելու իշխանութիւնը Ալլահը իսլամի ազատ կամքի և տրամադրութեան տակ է թողել, որոնց միայն իսլամի մարմանաւոր բարիքների ցանկութիւններին գոհացում տալու համար է միայն Ալլահը զիջել ընդհանրական զլխատումից, Ալլահի սրբազնասուրբ հրամանի ներհակ իրանց՝ Ալլահի ամենասիրելի կրօնական համայնքի անդամների հետ և աւասարել<sup>2)</sup>։

Ել ինչպէս համբերեն, երբ իսլամի հակառակորդ, պիղծ թշնամիները, իսլամին ուղղի ճանապարհից—չէրիաթի սրբազն շաղից—դէպի նախկին անօրէն պղծութիւնները ձգելու տրամադրի գժուխքի զաւակները<sup>3)</sup>, ստիպում են իսլամին, որ մտնեն խաւարի խորխորատները և այդ բայաներից, այդ զիմմիններից և չէղիէ վճառողներից գաւառապետներ, նահանգապետներ, մինիստրներ և ուրիշ պաշտօնակալներ նշանակւին իրանց՝ հաւատացեալների

<sup>1)</sup> Ղուրան սիւրեա ԽԼI Ֆիւսիւլաթ 41 այ.

<sup>2)</sup> " " XXX Բում 27 այեաթ.

<sup>3)</sup> " " V Մատքաթ. 17—20, 82—85 այ,

— " " III Խմբամ 142 այեաթ.

զլիսին, իսլամի կալւածների մէջ։ Եւրոպացի յաղթող պետութիւնները իրանց դաշնագրով ոչ միայն պահանջում են քաշել, համել իսլամի գերիշխանութիւնից իրանց վայելքներին ծառայելու չնորուած բայաններին, ոչ միայն ստիպում են, որ օսմանեան տէրութիւնը հրապարակով խոստանայ. Հը թողնել միւսլիմ ազգաբնաբնակութեան, ձեռք տալ այդ բայայի կարսղութեանը, աղջիկներին, տղաներին, այլ մինչեւ անգամ ապահովութիւն են պահանջում, որով իսլամը պարտաւորի իր բայայի կեանքի, գոքի համար պատասխանատու լինել այդ յաղթող պիղծ աղգերի առաջ։

Այսպիսի զուրանի ընդդէմ սկզբունքներով սահմանաւած օրէնսդրութիւնը, միթէ կարելի է գործադրել մի երկրում, որտեղ տիրող դասը չէրիաթի մոլեռանդ պաշտպանն է, որոնց կարծիքով զուրանից դուրս ամեն բան պղծութիւն, ապականութիւն է և վայրենութիւն։ Այն էլ մտածում են իսլամի ամենամեծ իմամի ձեռքով, իսլամի խալիֆութեան մէջ, առանց վիասելու իսլամի համայնական սեփականութեան և առանց այդ պիտութեան ամբողջութեանը և խալիֆութեան իրաւունքները վնասելու։ Խալիֆը՝ իմամը, որ իսլամի գենապեան է, դաստարոն է, և կառավարելու, գատելու, պահպանելու է, Ալլահից բղխած չէրիաթով, յայտնութիւնների տրամադրութեամբ իսլամի պետութիւնը, ժողովուրդը և գահը, էլ ինչպէս կարող է ինքն իր իրաւունքների ներհակ սկզբունքներով օրէնքներ սահմանել և գործադրել։

Վստահաբար կարելի է ասել, որ սուլթանները հոգւով ցանկացել են վերանորոգել, բարեկարգել իրանց երկիրը, մացնել եւրոպական կարգեր ու հաստատութիւններ իրանց պետութեան մէջ։ Սուլթանները ամեն միջոցի գիմել են, ուղղակի կամ անուղղակի իսլամի կղերին գործիք են շինել, վերջիններից չէրիաթին յարմարեցրած քէ թւանել կորպել, իրանց հրովարտակներն ու օրէնս-

գրութիւնները վաւերացնելով հրատարակել և ամեն ջանք արել են, որ գործադրութեան դնեն իրանց սահմանած կարգերն ու կանոնները երկը մէջ, բայց հնար չեն գտել: Պետութեան ամեն մի անկիւնում քըթմնջիւնով, բողոքով, հակակութիւնով և ցոյցերով են դիմաւորել իսլամները այդ կարգերին:

Վերանորոգչական օրէնսդրութիւնները, եթէ հարկն սահպել է, գործադրւել է երկու ոշմիւռ և լի մի գործերի վերաբերմամբ: Իսկ եթէ գործը շօշափել է մի որևէ խոլամ անհատի շահերը, վերջինս պատասել է միշտ սուլթանների հրօվարտակները և օրէնսդիրը, ինչպէս իշամեղուն սարդի ոստայնը ու յնւած դուրանին գոռացել.—Իսլամի շէրիաթը կործանւեց, որ գետաւոր—բայսն բացարձակապէս վարչութեան ձեռքով մեզ կողոպաէ: Ի՞նչպէս էք ստորացել, իսլամի իւլէմնէր, որ մեղ՝ հաւտասացեալներիս պարտաւորեցնում էք մեր զիմմիներին [գործով ու կեանքով պարտականներին]:

Այսպիսի դէպքերում կառավարութիւնը միշտ-մոլորել է, եթէ գործի մէջ միջամտել են և եւրոպացի կոնսիլները, կամ գեսաբանատները: Բայց ամեն դէպքում կառավարութիւնը, իր շահերը պաշտպանելու համար, պարտաւորւել է, լսել և թողնել, որ անօդնական բայային կեղեքէ, հարստահարէ, կիթէ ու քերթէ դուրանի հարազատ զաւակը: —Խա մի զիմմիի համար մի ահագին պետութիւն տուժելու չէ:

Թէև սուլթանների հրատարակած բոլոր հրօվարտակները և օրէնսդրութիւնները անցել են իսլամի կղերից էն զօրից, այդ կղերի գրչով խուզւել, փոփոխւել և զուրանին շէրիաթին յարմարեցւել են, եւրոպացից փոխանուած օրէնսդրութիւնների մէջ և առաջարկան մեծ փոփոխութիւններ է կատարւել, բայց

և այնպէս վարչութեան աջակցող իւլէմների կարծիքները և վկայութիւնները երբէք չեն ներգործել իսլամ ամբոխի և կղերի վրայ, որոնք միաբերան միշտ գուռում են. — Մէկ է Ալլահը և մէկ է նրա շէրիաթը: Ճէրիաթից գուրս ոչինչ չենք ճանաչում, ոչ մի կարգի հնագանդելու պարտաւոր չենք:

Այսօր օսմաննեան նահանգներից և նշանաւոր քաղաքներից շատերի մէջ, ուր ժողովրդի ազգարնակութեան մէջ ստար թւով քրիստոնեաներ են ապրում և եւրոպացի կոնսիլներ են նստում, հիմնարկւած են նոր կարգադրութիւնների համաձայն այլկայլ վարչական, դատաստանական հաստատութիւններ: Վիլայէթի (նահանգական), սանջաղի [գաւառական], զաղայի (գաւառակի) և միւգիւի (աւանական) ի դարէի (administration) ժողովները, դատաստանական ասեանները, քաղաքական խորհուրդները (քէլէզիէ) ամեն մի աշխի ընկնող քաղաքներում կազմակերպւած են: Այս հիմնարկութիւնները որբան որ հնարաւոր է եղել, ամեն շանք գործադրել են, որ արտաքուստ ձեւականութիւններով նմանեցնեն համանման եւրոպական հաստատութիւններին: Այդ հաստատութիւնների մասին խըմբագրւած են հատորներով օրէնսդրութիւններ և ստուարածւալ շրջաբերականներ, որոնք թաւալում են այդ հաստատութիւնների գրասեակների այլ և այլ անկիւններում փոշիների մէջ:

Այդ հիմնարկութիւններից իւրաքանչիւրը, օրէնքով կառավարելու են ժողովրդից ընարւած ներկայացւցիչները<sup>1)</sup>: Բայց իսկապէս զբանց ընտրութեան գործում հասարակութիւնը, ժողովուրդը բոլորովին տեղեկութիւն էլ չունի,

<sup>1)</sup> Վելայէթ նիղամնամակ, կ. Պոլիս, 1868 թ. Գլուխանակ հասարակ, հայաստան թուրքերէն:

թէ ինչպէս են ընտրում իր ներկայացուցիչ—հաւատարմատարները։ Ազմինիստրացիան իր ուղածին է ընտրում ժողովրդի միջից, կամ ընալի տալիս։ Եթէ քրիստոնեայթեմակալ առաջնորդները քիշ թէ շատ ազդեցիկ մաշտիկ են, կարաղնում են իրանց կամքն առաջ տանել։ Այդ գէպում ներկայացուցիչները ընտրում են և առաջնորդների կամքով։

Ներկայացուցիչները համեմատ քաղաքի, կամ գաւառի աղքաբնակութեան ընտրում են ինչպէս միւսլիմներից, նոյնպէս և քրիստոնեաներից՝ հայ, յան, հրէայ և ուրիշներից։ Բայց անօգուտ է այդ ներկայացուցիչների գոյութիւնը, մանաւանդ քրիստոնէնը, հրէայինը, միշտ աւելի քանաթէ վնասակար։ Դրանք աւելի քանթէ մի-մի կոյք գործիքներ են վալիների, միւթէսարիֆների, դատարանական նախագահների և քաղաքապետների ձեռքում, որոնք յենած այդ աղքաբնակութեան ներկայացուցիչների կնիքներին, աւելի կամոյական և աւելի սահնակարան գործում են յօդուա իրանց գրպանի, կամներին հրահնագների։ Եթէ մարդ հետաքրքրութեամբ հետուէ այդ անլեզու ներկայացուցիչների արագիներով, կարող է մի քանի մեծահատոր անեկոտներ կազմել ապագայ սերունդի գւարճութեան համար, բայց մեր յօդածի ծաւալը չի ներիլ այդպիսի անցքերի նկարագրութիւններով<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Վեցներ 1877 թ. պատերազմի ժամանակ, Երբ վարչական ժողովի գրազմունքները պատերազմի խառնաշխութութեան մէջ տեղի ունեցած ամենաէական հարցերը մասին էր, Երբ Ա. Հ. Ե. ա. Մ. Հարբը (գինուրական գատարանը) սահմանվ ժողովի բնէ կարծեքներն ստանալուց յետոյ, ամեն օր մարդ էր կախաղան բարձրացնում, որպէս պետական գաւառաններ և քաղաքական յանցաւորներ, Երբ յայտնի տաճիկ-դիվլումատ և նախկին սաղմարդ Քիւչեւը Սայիդ փաշան կալսում միւթէսարիվ էր, Կայ-

Այդ հիմնարկութիւններից ժողովրդին, քրիստոնեայ աղքաբնակութեան բարիք երբէք չի կարելի սպասել, եթէ քննենք լրջութեամբ դրանց մասին խմբագրած օրէնսդրութիւնները, որոնք կանխապէս իսլամական խորամանկութեամբ ու գործնական հեռատեսութեամբ են կազմակերպւած և պարբերական շրջաբերականներով կաշկանդւած։ Ճշմարիտ է, այդ օրէնսդրական գրքերը գուգում են դիմում է անդամ, բաժանմունքը, հատւածներն ու յօդւածներն ունին, բայց բովանդակութիւնը շատ մթին է և աարեւը։ Խոլամի իւլիմները այնպիսի ցէնզօրական պաշտօն են վարել արդ օրէնսդրութիւնների յօդւածների խմբագրութեան մէջ, որ դրանց ծռմուկն ու ձգձգելը շատ հեշտ է վարպետ գործադրողի ձեռքում։

առում է, որ կուլէումներկայացուցիչներէց մէկը, առանց որևէ կաթօնի յայտներու, առանց շըմունքները շարժելու, ժողովի արձանագրութիւնները առանց կարգալու և եւթէք նրանց բովանդակութեան մասին հետաքրքրութերու, կնքում է և դուրս գնում, միթասսարբիք հետեւ լով առում է։

Յակուտ աղա՛, զուը ևս ձանձրութեան քաշում և ամեն օր ժողովի գալիս։ Աւելի լաւ է գու քու կնիքը այս պատեց կախեր, քարտուղարն էլ կարէք եղած ժամանակ արձանագրութիւնները ըստ կիրով վաւերացնէ։ (Օսմաննեան բոլոր հիմնարկութիւնների մէջ ստորագրելու սովորութիւն ըլիկայ, անւանական կիրով և վաւերացնում արձանագրութիւնները)։

Բայց այս անցքը պատահական, կամ ծայրայեղ գէպը ըլալէալէ նկատել։ Ազգում իսթիւտաֆի ժողովի քարտուղարը զըսպանում մի քսակի մէջ մեշտ պահում էր ժողովի անդամների կնիքները, մի շղթակ միշտ անցկացրած և կնքում էր եր իսլեալը ըստը վճիռները, մինչեւ անդամ եթէ կնիքը տէրեւը ամփաներով ըստ ցարկայ էնի լինում քաղաքեց։ Պէտք է իմանալ, որ այդ գատարանի իբաւունք ունի անսահման գումարների և ամեն աեւակ անշարժ կարեւը մասին վճիռներ կայացնել, սրնաց քանդալը շատ դժւար է և Պուտի թէմիզում (վճարէկ առեսան)։

Ամենից գլխաւորն այն է, որ բոլոր դատաստանական ատեաններում, աւանի, գաւառի, նահանգի քաղաքների, մինչև Կ. Պոլսի դատաստանական սրահներում՝ նորահաստատ օրէնսդրութիւնների համաձայն՝ նախագահում են իսլամի կրօնական դատաւորները—չաքիմի-շէրի-դադիները։ Հասկանում էք՝ թէ ինչ բան է «չաքիմի-շէրի» զադին։ Պարզենք։

Խոլամի օրէնքով Ալլահը միայն դատաւոր է նշանակել հմամը-Ազամին խոլամի անդամների բոլոր զործերն ու վէճերը վճռելու համար։ Խալիֆը՝ որպէս զենակտ՝ երկրի բոլոր մղկիթներին փոխանորդներ է կարգում, որ ժողովի առաջ իրան անձնափոխանորդաբար կանգնեն և աղօթել տան, մեռելները թաղին ևայն ևայն։ այդպէս էլ իրան փոխանորդաբար ժողովրդի գանգատները լսեն, զործերը քննեն, գաշնագրերը վաւերացնեն և վճիռներ արձակեն։ Մահմէզը, Աբուբէքրը, Ալին, Էօմէրն ու Օսմանը մեծ մասամբ իրանք անձամբ էին քննում ու վճռում ժողովրդի բոլոր գանգատները և վճիռներ տալիս։ Այսօր էլ ամեն մի խոլամ իրաւունք ունի դիմել ուղղակի խալիֆին և իր գանգատների մասին բաւարարութիւն պահանջել։ Բայց երբ խոլամի պետութիւնը ընդարձակեց, այնպէս որ այլևս անհնարին էր բոլոր զործերը կենարոնացնել և մի տեղից վճիռներ արձակել, Խամիթ-Միւալին հետեւելով իր նախորդների փոխանորդաբար վարել տած զործերին, ինքը պետութիւնը բաժանեց գաւառակների (զագաների) և ամեն մի գաւառակում հաստատաբնակ դատաւորներ նշանակեց, սրանց իրան փոխանորդ (նախիր) կոչումը տալով և չաքիմի-շէրի (կրօնական դատաւոր), կամ զադի անւանով։ Այդ ժամանակից չաքիմի-շէրի դադիները, որպէս հմամի-ազամի փոխանորդներ՝ սկսեցին տեղն ու տեղը ժո-

զովուրդի զանգատները լսել և չէրիաթի համաձայն վճիռներ արձակել։ Ղաղիները զինւած զուրանով, չէրիաթով, հաղիսներով և Մուալիի օրերում կարգի դրւած սիւնայով<sup>1)</sup>, այդ օրերից մինչև այսօր դատեցին ժողովրդի բոլոր զործերը իսլամի միակ կրօնապետին փոխանորդաբար։

Մհա այդ նակի-զադիների յաջորդները, իբր վերանորոգած դատարաններում բազմել են այսօր նախազահի աթուի վրայ, իրանց նահապետական կարգերով, նախորդների սկզբունքներով և վարդապետութիւններով վճիռներ են արձակում։ Խարում են աշխարհին, թէ նորակազմ հասարակական ներկայացուցիչներից կազմած դատարանը վճիռ արձակեց, այն ինչ խալապէս զործը վճռողը դարձեալ իսլամի հին զադին է, որ չէրիաթից մի շիզի չափ անգամ իսլամի հին զադին է, որ չէրիաթից մի շիզի չափ անգամ իսլամի հին զադին է։ Այն փքուն օրէնսդրութիւնները, այն հաշիւարութիւն, աղատութիւն, անխստութիւնը քարոզող հրաժարակների զործադրութիւնը զարձեալ մնում է դուրսկարտակների զործադրութիւնը զարձեալ աշխարհական կարգերի, անհամբերասար վարդապետների բանի աշխարհական կարգերի, անհամբերասար վարդապետների սուձուքը և նրանցից իրաւունք և արդարութիւն սիստի մուձեռքը և նրանցից իրաւունք և արդարութիւն սիստի մուձեռքը և նրանցից իրաւունք անարգւած, անկեզու դաւակները... ըան քրիստոնեաների անարգւած, անկեզու դաւակները...

